Հավելված 1
Վարչության նախագահի 2016 թվականի  հունվարի 22-ի թիվ 02 Լ հրամանի

# «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ – 2016

**Հարգելի Հաճախորդ,**

Շնորհակալություն ենք հայտնում «Արդշինբանկ» ՓԲԸ ծառայություններից օգտվելու համար: Խնդրում ենք ծանոթանալ ստորև նշված պայմաններին և կանոններին (այսուհետ՝ **«Ընդհանուր Պայմաններ»** կամ **«Պայմաններ»**), որոնք կարգավորում են «Արդշինբանկ» ՓԲԸ կողմից առաջարկվող ծառայություններից օգտվելու կապակցությամբ Ձեր և «Արդշինբանկ» ՓԲԸ միջև ծագող պայմանագրային հարաբերությունները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ........ 4
2. ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ ........ 5
3. ԲԱՆԿԻ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ........ 6
4. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ ........ 8
5. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻ ՀԱՏՈՒԿ ՀԱՇԻՎՆԵՐ ........ 11
6. ԱՎԱՆԴՆԵՐ ........ 15
7. ՉԵԿԱՅԻՆ ԳՐՔՈՒՅԿՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ........ 18
8. ՀԵՌԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ ........ 19
9. ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔ: ՄԻՋՈՑՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ........ 22
10. ԲԱՆԿԻ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ........ 23
11. ԿԻՐԱՌՎՈՂ ԻՐԱՎՈՒՆՔ, ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ ........ 24
12. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ ........ 24

ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ........ 28

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ.
ԾԱՆՈՒՑՈՒՄ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ
ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

## 1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Պայմաններում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը, եթե այլ բան չի նշված, կամ բովանդակությունը կամ համատեքստը այլ բան չի պահանջում.

**«Բանկ»** - «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերություն (գրանցված 25.02.2003թ., Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի 25.02.2003թ. թիվ 76-Ա որոշմամբ, բանկային գործունեության լիցենզիա թիվ 83):

**«Հաճախորդ»** - Բանկի ծառայություններից օգտվող կամ օգտվել ցանկացող ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր, իրավաբանական անձ (այդ թվում՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն կամ այլ սուբյեկտ, որն իր նկատմամբ կիրառվող իրավունքի համաձայն կարող է ունենալ բանկային հաշիվներ և օգտվել այլ բանկային ծառայություններից):

**«Ավանդատու»** - Հաճախորդ, ով Բանկի հետ կնքել է բանկային ավանդի պայմանագիր,

**«Բանկային հաշիվներ/Հաշիվներ»** (այսուհետ՝ նաև Հաշիվ) - Բանկի կողմից Հաճախորդներին առաջարկվող ընթացիկ, քարտային, խնայողական, ավանդային, վարկային, մետաղական և այլ հաշիվներ: Հաճախորդի առանձին տեսակների հաշիվների սպասարկումից բխող Բանկի և Հաճախորդի հարաբերությունները կարող են կարգավորվել Բանկի կողմից սահմանված կարգով ընդունված այլ փաստաթղթերով, որոնց անբաժանելի մասն են կազմում նաև սույն Պայմանները:

**«Կառուցապատող»** - Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը հողամասի սեփականատեր է և հողամասում կառուցվող ստորաբաժանված շենքի ճարտարապետահատակագծային առաջադրանքի, ճարտարապետաշինարարական նախագծի, շինարարության իրականացման թույլտվության և ճարտարապետաշինարարական նախագծով նախատեսված ստորաբաժանված միավորների ցուցակի հիման վրա վերջինիս անվամբ կադաստրում օրենքով սահմանված կարգով գրանցված է որոշակի մակերեսով կառուցվող շենքի նկատմամբ կառուցապատողի իրավունքներն ու պարտականությունները :

**«Գնորդ»** - Կառուցապատողի հետ կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրի (այսուհետ՝ նաև Գնման իրավունքի պայմանագիր) գնորդ կողմ հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձ:

**«Կառուցապատողի հատուկ հաշիվ»** - Բանկի կողմից Կառուցապատողներին առաջարկվող հատուկ հաշիվ, որը նախատեսված է գնորդների հետ կնքված կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրերի հիման վրա կառուցվող շենքում բնակարանների և ոչ բնակելի տարածքների ձեռքբերման նպատակով Գնորդների/Գնորդների օգտին գործող երրորդ անձ վճարողների կողմից կանխավճարների և ձեռքբերմանն ուղղված այլ վճարների ստացման համար:

**«Սակագներ»** - Բանկի կողմից հաստատվող և ժամանակ առ ժամանակ վերանայվող փաստաթուղթ, որը նախատեսում է Հաշվի և Կառուցապատողի հատուկ հաշվի սպասարկման համար Բանկի սահմանած վճարների չափերը, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ Հաշվի/ Կառուցապատողի հատուկ հաշվի բացման և սպասարկման, Հաշվով/ Կառուցապատողի հատուկ հաշվով գործառնություններ կատարելու և այլ բանկային ծառայությունների մատուցման դիմաց Հաճախորդից գանձվող այլ վճարների տեսակները, դրանց գանձման կարգն ու չափերը: Սակագները համարվում են Պայմանների անբաժանելի մասը: Ընդ որում Բանկը կարող է սահմանել ընդհանուր և անհատական սակագներ՝ առանձին Հաճախորդների կամ Հաճախորդների խմբերի համար:

**«Բանկային օր»**՝ (այսուհետ՝ նաև գործառնական օր) աշխատանքային կամ ոչ աշխատանքային օր, երբ բանկերը մատուցում են բանկային ծառայություններ: Բանկային օրը սկսվում է Երևանի ժամանակով ժամը 9:15-ին և ավարտվում 16:45-ին, եթե Բանկի կողմից այլ բան սահմանված չէ առանձին ծառայությունները կարգավորող պայմաններում կամ պայմանագրերում:

**«Դիմում-պայմանագիր»**՝ Բանկի սահմանած ձևի՝ Բանկի կողմից մատուցվող ծառայություններից (ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ բանկային հաշիվ բացելու, չեկային գրքույկ տրամադրելու, հեռակառավարման համակարգերով գործառնություններ կատարելու, ավանդ

ներդնելու) օգտվելու նպատակով համապատասխան պայմանագիր կնքելու առաջարկություն պարունակող դիմում:

**«Հեռակառավարման համակարգ»**՝ «Բանկ-Հաճախորդ» հեռակառավարման համակարգ և/կամ այլ ավտոմատացված էլեկտոնային համակարգ, որի միջոցով, էլեկտրոնային փաստաթղթերի և հատուկ տեխնիկական միջոցների (սերտիֆիկատներ, բանալիներ և այլն) կիրառմամբ Բանկը հաճախորդին մատուցում է առանձին բանկային ծառայություններ:

## 2. ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ

2.1 Սույն Պայմանները սահմանում են Բանկի կողմից հաշիվների բացման և վարման (սպասարկման), այլ բանկային ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները և կարգավորում են դրանց հետ կապված Բանկի և Հաճախորդի (այսուհետ միասին՝ Կողմեր) միջև ծագած պայմանագրային հարաբերությունները:

2.2 Բանկի ծառայություններից օգտվելով, ինչպես նաև Բանկի հետ պայմանագիր (ներառյալ՝ դիմում-պայմանագրեր) ստորագրելով՝ Հաճախորդը հայտարարում է, որ ընդունում է սույն Պայմանները և Սակագները, հասկացել է դրանց իմաստը, տեղյակ է, որ դրանք պարտադիր են Հաճախորդի և Բանկի համար և ունեն պայմանագրի ուժ:

2.3 Հաճախորդը կարող է ծանոթանալ Պայմանների օրինակին Բանկի կենտրոնական գրասենյակում և մասնաճյուղերում տեղադրված տեղեկատվական վահանակներից, ինչպես նաև Բանկի կորպորատիվ կայքից՝ www.ardshinbank.am, որտեղ տեղադրված Պայմանները ունեն նույն իրավաբանական ուժն ու կիրառելիությունը: Հակացությունների դեպքում գերակայում է կորպորատիվ կայքում հրապարակված տարբերակը:

2.4 Բանկի առանձին ծառայություններ և գործառնություններ կարող են տրամադրվել այլ պայմանագրերի, ինչպես նաև Բանկի կողմից սահմանվող այլ կանոնների և պայմանների հիման վրա: Սույն Պայմանները համարվում են այդ պայմանների անբաժանելի մասը, և կարգավորում են նաև այլ բանկային ծառայությունների մատուցման հետ կապված Բանկի և Հաճախորդի պայմանագրային հարաբերությունները, այնքանով, որքանով այլ բան սահմանված չէ առանձին ծառայություններին վերաբերող հատուկ պայմանագրերով և պայմաններով և սույն Պայմաններով:

2.5 Եթե օրենքով, ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև Բանկի և Հաճախորդի լրացուցիչ գրավոր համաձայնությամբ, այդ թվում Դիմում-պայմանագրով, սահմանված են այլ դրույթներ, քան Ընդհանուր Պայմաններով, ապա այդ ակտերի դրույթները ճանաչվում են գերակայող:

2.6 Պայմանները, Սակագները, ինչպես նաև բանկային ծառայություններին վերաբերող ուղեցույցները, հավելվածները և այլ փաստաթղթերը հաստատվում են Բանկի կողմից և կարող են ժամանակ առ ժամանակ Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել: Բացառությամբ Հաճախորդի համար անհատական սակագին սահմանելու դեպքերի, որոնք հրապարակման ենթակա չեն, փոփոխությունները ուժի մեջ են մտնում Բանկի կորպորատիվ www.ardshinbank.am կայքում հրապարակելու օրվան հաջորդող -րդ օրը աշխատանքային օրը, եթե Բանկի կողմից հրապարակմամբ համապատասխան փոփոխություններն ուժի մեջ մտնելու այլ ժամկետ չի սահմանվում, ընդ որում հրապարակման օր է համարվում Բանկի ինտերնետային կայքում դրանց տեղադրման ամսաթիվը: Հաճախորդը համաձայնում է, որ Բանկի ծառայություններից օգտվել շարունակելը (ներառյալ՝ հաշիվները չփակելը՝ առանց դրանցով գործառնություններ կատարելու) նշանակում է, որ փոփոխություններն ընդունվել են Հաճախորդի կողմից: Սույն կետով սահմանված՝ միակողմանիորեն կատարվող փոփոխություններն ուժի մեջ մտնելու ժամկետի և սույն պայմանների հետ միասին Հաճախորդի հետ կնքված պայմանագրի անբաժանելի մաս կազմող այլ փաստաթղթերով սահմանված՝ միակողմանիորեն կատարվող փոփոխությունների ուժի մեջ մտնելու ժամկետի միջև հակասություններ առաջանալու դեպքում գործում է սույն կետով սահմանված ժամկետը:

Հաճախորդի համար անհատական սակագին սահմանվելու դեպքում, սակագինն ուժի մեջ է մտնում Բանկի կողմից սահմանված ժամկետում:

2.7 Պայմաններով սահմանված կարգով Պայմաններում, Սակագներում և Բանկի կողմից մատուցվող առանձին ծառայություններից բխող հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերում փոփոխություններ կատարելուց բացի Բանկն իրավունք ունի փոփոխել նաև Հաճախորդի կողմից ստորագրվող պայմանագիրը, այդ թվում Դիմում-պայմանագիրը, Բանկի սահմանած ձևի այլ տիպային փաստաթուղթը առանց Հաճախորդի ստորագրությունը ստանալու, եթե փոփոխությունները կրում են տեխնիկական բնույթ (թվաբանական սխալներ, տառասխալներ, վրիպակներ, բացթողումներ և այլն) կամ կատարվում են հօգուտ Հաճախորդի և հանգեցնում են Հաճախորդի համար բարենպաստ հետևանքների:

## 3.ԲԱՆԿԻ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Բանկի ծառայություններից օգտվելով՝ Հաճախորդը երաշխավորում և հավաստիացնում է, որ գործառնությունների կնքման և կատարման համար ունի անհրաժեշտ իրավունակություն և գործունակություն, ստացել է խնամակալների, հոգաբարձուների, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ կառավարման մարմինների, վերստուգող կամ վերահսկող մարմինների, պարտատերերի և այլ մարմիններից և անձանցից պահանջվող բոլոր թույլտվություններն ու համաձայնությունները:

3.2 Կողմերը հավաստիացնում են, որ Պայմանները իրենց համար իրավաբանորեն պարտադիր և վավեր են և իրենց հայտնի չէ որևէ հանգամանք, որը կարող է հանգեցնել սույն Պայմաններից բխող պարտավորությունների անվավերությանը:

3.3 Եթե որևէ գործառնություն իրականացնելու համար Բանկի կողմից սահմանված է փաստաթղթերի որոշակի օրինակելի ձև, Բանկն իրավունք ունի չընդունել այդ ձևին չհամապատասխանող ցանկացած փաստաթուղթ և հրաժարվել գործառնության իրականացումից: Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից ներկայացված փաստաթղթերում տեղեկությունների անճշտության համար:

3.4 Բանկն իրավունք ունի պահանջել թարգմանել օտար լեզուներով ներկայացված փաստաթղթերը հայերեն լեզվով, ինչպես նաև սահմանված կարգով վավերացնել դրանք: Բանկն իրավունք ունի պատճենահանել կամ իր մոտ պահել փաստաթղթերը՝ առանց Հաճախորդի ծախսերը հատուցելու պարտավորության:

3.5 Բանկի ծառայություններից օգտվելիս Հաճախորդը պարտավոր է ներկայացնել փաստաթղթեր և տվյալներ, որոնք հնարավորություն են ընձեռում Բանկին պատշաճ կերպով նույնականացնել Հաճախորդին և ստուգել տվյալ գործառնությունն իրականացնելու Հաճախորդի իրավասությունը:

3.6 Հաճախորդին նույնականացնելիս Բանկն ապահովում է համապատասխան փաստաթղթի, դրա վրա առկա ստորագրության կամ ներկայացված անձի նույնականացումը տեսողական զննության միջոցով: Բանկը պարտավոր չէ կիրառել նույնականացման հատուկ միջոցներ և պատասխանատու չէ Հաճախորդի անունից կատարված գործարքների արդյունքում Հաճախորդի կորուստների և վնասների համար, եթե տվյալ իրավիճակում խելամտորեն հնարավոր չէր պարզել, որ գործառնությունը չէր բխում Հաճախորդի իրական կամքից:

3.7 Հաճախորդը կարող է իր Հաշիվների տնօրինման իրավունքը փոխանցել այլ անձի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված, Բանկի համար ընդունելի լիազորագրի հիման վրա: Լիազորված անձի միջոցով գործառնություններ կատարելիս Հաճախորդը պարտավոր է ապահովել, որ լիազորագիրը հստակ ձևով արտահայտի Հաճախորդի կամքը Հաճախորդի անունից տվյալ գործառնությունը կատարելու համար որևէ երրորդ անձին իրավունք ընձեռելու վերաբերյալ: Հաճախորդը այլ անձին տրված լիազորագիրը հետ կանչելու դեպքում, պարտավոր է այդ մասին գրավոր ծանուցել Բանկին(լիազորագրի հիման վրա գործարք կատարող Բանկի մասնաճյուղին): Բանկը պատասխանատվություն չի կրում լիազորված անձի միջոցով կատարված գործողությունների արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար, եթե Լիազորված անձի կողմից համապատասխան գործողությունների իրականացման պահին Բանկը (լիազորագրի հիման վրա

գործարք կատարող Բանկի մասնաճյուղը) չի ստացել Հաճախորդի գրավոր ծանուցումը լիազորագիրը հետ կանչելու մասին: Հաճախորդը Բանկի առջև ամբողջ ծավալով պատասխանատվություն է կրում իր կողմից լիազորված անձանց գործողությունների համար: Ընդ որում, եթե Բանկի սահմանած ձևի ստորագրությունների նմուշի քարտը կամ Հաճախորդի անունից բանկային գործառնություններ կատարելու լիազորությունը հաստատող այլ փաստաթուղթը պարունակում է Հաճախորդի անունից հանդես գալու լիարժեք լիազորություն, այն Բանկի կողմից դիտարկվում է որպես Բանկի պահանջներին համապատասխանող և Հաճախորդի անունից Հաշվով ցանկացած բանկային գործարք կատարելու համար տրված պատշաճ լիազորագիր՝ եթե Հաճախորդի կողմից Բանկին ներկայացված գրավոր ծանուցմամբ սույն կետում նշված փաստաթղթում նշված անձի համար լիազորությունների այլ շրջանակ սահմանված չէ: Հայերենից տարբերվող այլ լեզվով լիազորագիր ներկայացնելու դեպքում՝ Բանկ պետք է ներկայացվի նաև լիազորագրի նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանված տարբերակ:

3.8 Հաճախորդը պարտավոր է Բանկ ներկայացնել լիարժեք տվյալներ, որոնք անհրաժեշտ են իր հետ կապ հաստատելու համար, ինչպես նաև տրամադրել այլ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք ժամանակ առ ժամանակ պահանջվում են Բանկի կողմից: Հաճախորդը պարտավոր է անհապաղ գրավոր ծանուցել Բանկին այդ տվյալների բոլոր փոփոխությունների մասին:

3.9 Հաճախորդը պարտավոր է անհապաղ Բանկին գրավոր տեղեկացնել բոլոր այն հանգամանքների և իրադարձությունների մասին, որոնք կարող են ազդել Բանկի հետ փոխհարաբերությունների վրա (ներառյալ՝ առանց սահմանափակման՝ Հաճախորդի անվան/անվանման, կազմակերպաիրավական ձևի, ռեզիդենտության, հասցեի, ներկայացուցիչների և նրանց լիազորությունների ծավալի փոփոխությունները, Հաճախորդի նկատմամբ սնանկության/անվճարունակության վարույթի հարուցումը և այլն)՝ Բանկի պահանջով ներկայացնելով համապատասխան հանգամանքները և իրադարձությունները հաստատող փաստաթղթեր:

3.10 Բանկը Հաճախորդի վերաբերյալ իր մոտ առկա, այդ թվում Հաճախորդի կողմից ներկայացված տվյալները համարում է հավաստի և հիմնվում է դրանց վրա այնքան ժամանակ, քանի դեռ Հաճախորդը Բանկին պատշաճ կերպով չի տեղեկացրել դրանց փոփոխությունների մասին: Միևնույն ժամանակ, Բանկն իրավունք ունի ստուգել Հաճախորդի կողմից ներկայացված տեղեկատվությունը, ինչի համար պայմանագրի կնքմամբ Հաճախորդը լիազորում է Բանկին իրականացնել ցանկացած, Բանկի կարծիքով անհրաժեշտ վերստուգում, այդ նպատակով Հաճախորդի անունից հարցումներ կատարել համապատասխան տեղեկատվությանը տիրապետող անձանց և մարմիններին:

3.11 Կողմերն ընդունում են, որ Պայմաններից բխող ցանկացած ծանուցում, պահանջ, տեղեկատվություն և այլ հաղորդագրություն իրականացվում է գրավոր ձևով, պետք է ստորագրված լինի այն ուղարկող Կողմի կողմից (Կողմի լիազորված անձի կողմից), և ուղարկվի մյուս կողմի իրեն հայտնի վերջին հասցեով, եթե այլ բան համաձայնեցված չէ: Այդ հաղորդումները համարվում են հասցեատիրոջ կողմից պատշաճ կերպով ստացված՝ թղթային եղանակով ուղարկված ծանուցումների դեպքում՝ հասցեատիրոջ կողմից ստորագրելու պահին, բայց բոլոր դեպքերում ոչ ուշ, քան նամակը փոստին կամ կապի այլ կազմակերպությանը հանձնելուն հաջորդող յոթերորդ աշխատանքային օրը, իսկ էլեկտրոնային եղանակով (էլ. փոստով կամ ֆաքսով) ուղարկված հաղորդումը՝ հասցեատիրոջ սարքավորումից հետ եկած ծանուցումը ստանալու պահին, որը փաստում է, որ հաղորդագրությունը ստացվել է հասցեատիրոջ կողմից: Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որ Պայմաններից բխող Բանկի կողմից ներկայացվող ցանկացած ծանուցում, պահանջ, տեղեկատվություն և այլ հաղորդագրություն իրականացվի էլեկտրոնային եղանակով՝ Դիմում-պայմանագրում, պայմանագրի կնքման համար հիմք հանդիսացող Հաճախորդի կողմից ստորագրվող այլ տիպային փաստաթղթում նշված էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկելու և(կամ) Հեռակառավարման համակարգերի միջոցով՝ նշված համակարգով Հաճախորդին սպասարկելու վերաբերյալ կնքված պայմանագրի առկայության դեպքում:

3.12 Տրամադրելով իր տվյալները Բանկին՝ Հաճախորդը համաձայնում է Բանկից փոստային կապով, էլեկտրոնային փոստով, հեռախոսակապով և կապի այլ միջոցներով ստանալ Բանկի ծառայությունների վերաբերյալ տեղեկատվական նյութեր, պայմանագրեր կնքելու առաջարկներ և այլ փաստաթղթեր:

3.13 Բանկն իրավունք ունի ձայնագրել, լուսանկարել կամ տեսագրել Հաճախորդի և Բանկի միջև հեռախոսային խոսակցությունները, Հաճախորդի այցելությունները և Բանկի տարածքում կատարվող գործառնությունների ընթացքը: Այդ ձայնագրությունները, լուսանկարները ու տեսագրությունները պահվում են Բանկում և կարող են ծառայել որպես ապացույց՝ հնարավոր տարաձայնությունների լուծման համար:

3.14 Հաճախորդը սույնով տալիս է իր համաձայնությունը Բանկին այլ անձանցից ընդունել Բանկի առջև Հաճախորդի ունեցած դրամական պարտավորությունների կատարմանն ուղղված գումարները և Բանկին ազատում այդ գործողություններից բխող ցանկացած պահանջներից և պատասխանատվությունից:

3.15 Բանկի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց Հաճախորդը վճարումները կատարում է համաձայն Բանկի Սակագների, ընդ որում համապատասխան ծառայությունը արժույթի փոխարկում պահանջելու դեպքում, փոխարկումը կատարվում է համաձայն Բանկի սահմանած փոխարժեքի: Բանկն իրավունք ունի Սակագներով սահմանված վճարները , ինչպես նաև Հաճախորդին ծառայությունների մատուցման արդյունքում Բանկի կատարած ծախսերը, և Բանկի հետ կնքված պայմանագրերով Բանկի նկատմամբ պարտքեր ձևավորելու դեպքում, համապատասխան գումարները անակցեպտ կարգով՝ առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարությունների գանձել Հաճախորդի Հաշվից: Ընդ որում, Բանկն իրավունք ունի փոխարկել արտարժութային Հաշվից ելքագրման ենթակա գումարը Բանկի սահմանած փոխարժեքով և գանձել փոխարկման համար Սակագներով սահմանված վճարը:

3.16 Կողմերն ընդունում են, որ Պայմաններով սահմանված դեպքերում էլեկտրոնային եղանակով Հաճախորդին ներկայացվող փաստաթղթերը և տվյալներն ունեն կողմերի ստորագրությամբ ամրագրված թղթային բնօրինակ փաստաթղթի ուժ և նույն իրավական նշանակությունը, համարվում են պաշտոնապես փոխանցված Հաճախորդին և հիմք են հանդիսանում Հաճախորդի Հաշիվներով գործողություններ կատարելու համար: Այն դեպքում, երբ փաստաթղթերի ներկայացումը իրականացվում է Հեռակառավարման համակարգերի միջոցով՝ սույն կետով սահմանված դրույթները վերաբերում են նաև Հաճախորդից նշված համակարգերի միջոցով ստացվող փաստաթղթերին: Ընդ որում սույն կետում նշված եղանակներով Հաճախորդին տրամադրվող (Հաճախորդից ստացվող) տվյալների (տեղեկատվության) հիման վրա կատարվող գործողություններից (որոշակի գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալուց) բխող իրավական հետևանքների ռիսկը, հնարավոր վնասները, կորուստները և ծախսերը կրում է Հաճախորդը:

## 4. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ

4.1 Հաշիվները բացվում են Բանկի կողմից սահմանված փաստաթղթերը ներկայացվելու դեպքում՝ Բանկի սահմանած ձևի Դիմում-պայմանագրի, պայմանագրի կամ Բանկի կողմից սահմանված այլ տիպային փաստաթղթի հիման վրա: Սույն Պայմանները, Սակագները, ինչպես նաև տվյալ տեսակի Հաշվի առանձնահատկությունները կարգավորող Բանկի կողմից ընդունված այլ փաստաթղթերը միասին կազմում են Բանկի և Հաճախորդի միջև կնքված պայմանագրի անբաժանելի մասը:

4.2 Արժույթները, որոնցով կարող են բացվել Հաշիվները, և համապատասխան արժույթով բացված Հաշվով իրականացվող գործառնությունների տեսակները սահմանվում են Բանկի կողմից: Յուրաքանչյուր Հաշիվ սպասարկում է միայն մեկ արժույթ, եթե այլ բան սահմանված չէ Բանկի կողմից:

4.3 Հաշվի մնացորդի նկատմամբ տոկոսները հաշվարկվում և վճարվում են համաձայն Բանկում գործող Սակագների, եթե այլ բան սահմանված չէ տվյալ տեսակի Հաշվի հատուկ պայմանագրերով, կանոններով և/կամ պայմաններով:

4.4 Բանկը Հաշվից դրամական միջոցները դուրս է գրում Հաճախորդի Հաշվին առկա դրամական միջոցների սահմաններում: Այդուհանդերձ, Հաշվից միջոցներ դուրսգրելու կարգադրությունները Բանկը կարող է ընդունել կատարման՝ անկախ կարգադրություններում նշված գումարների չափերից և Հաշվին դրամական միջոցների առկայությունից Հաճախորդի կողմից Բանկին տրված պարբերական կամ այլ վճարումների հանձնարարականի հիման վրա: Ընդ որում, Հաճախորդի Հաշվի անբավարար մնացորդի դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում վճարման հանձնարարականի չկատարման համար:

4.5 Հաճախորդի հետ կնքված վարկային կամ այլ պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով Բանկը կարող է պայմանագրի համաձայն վարկավորել Հաճախորդի բանկային Հաշիվը՝ հնարավորություն ընձեռելով գումար դուրսգրել Հաշվին դրամական միջոցների բացակայության պայմաններում: Հաշվին դրամական միջոցների բավարար լինելու փաստը որոշվում է Բանկի կողմից:

4.6 Բանկը Հաճախորդի Հաշվին մուտք եղած դրամական միջոցները մուտքագրում է ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ բանկային օրը:

4.7 Հաշիվը տնօրինելու Հաճախորդի իրավունքները կարող են սահմանափակվել առանց Հաճախորդին տեղեկացնելու՝ Հայաստանի Հանրապետության դատարանների և այլ իրավասու մարմինների որոշմամբ, ինչպես նաև Բանկի որոշման հիման վրա, եթե Հաճախորդը խախտում է Բանկի առջև ստանձնած վարկային կամ այլ պարտավորությունները:

4.8 Եթե Հաշվին փոխանցվել են դրամական միջոցներ, որոնք տարբերվում են Հաշվի արժույթից, ապա Բանկը Հաշվին մուտքագրում է դրան համարժեք գումար՝ հաշվարկված Բանկի կողմից անկանխիկ գործարքների համար տվյալ գործառնության իրականացման պահի դրությամբ գործող փոխարժեքով:

4.9 Բանկն ունի գրավի իրավունք Հաշվին առկա բոլոր միջոցների նկատմամբ՝ որպես Բանկի և Հաճախորդի միջև առկա և/կամ հետագայում առաջացող Հաճախորդի բոլոր պարտավորությունների կատարման ապահովում, եթե այլ բան սահմանված չէ այլ պայմանագրերով, կանոններով և/կամ պայմաններով: Հաճախորդը չի կարող գրավ դնել Հաշվին առկա միջոցները՝ առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության:

4.10 Հաճախորդի Հաշվում դրամական միջոցների առկայության դեպքում, որոնց գումարը բավարար է հաշվին ներկայացված բոլոր պահանջները բավարարելու համար, այդ միջոցները դուրս են գրվում Հաճախորդի կարգադրությունները և դուրսգրման այլ փաստաթղթերը մուտք լինելու հաջորդականությամբ (օրացուցային հաջորդականություն), եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

4.11 Հաճախորդի Հաշվում դրամական միջոցների անբավարարության դեպքում դրամական միջոցները դուրս են գրվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաջորդականությամբ: Ընդ որում, եթե Հաճախորդի հաշվին արգելանք դրված չէ, առաջնահերթության իրավունքով Բանկը գանձում է իր նկատմամբ չմարված Հաճախորդի ժամկետանց պարտավորությունները:

4.12 Հաճախորդը սույնով անհետկանչելիորեն լիազորում և կարգադրում է Բանկին անակցեպտ կերպով (առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարության) գանձել և պատշաճ ստացողներին փոխանցել Հաճախորդի Հաշվին սխալմամբ (այդ թվում օրենքի խախտմամբ) մուտքագրված, ինչպես նաև սխալմամբ չելքագրված կամ այլ կերպ Բանկի գործողությունների արդյունքում Հաճախորդի կողմից անհիմն ձեռքբերված կամ խնայված բոլոր գումարները:

4.13 Հաճախորդը սույնով անհետկանչելիորեն լիազորում և կարգադրում է Բանկին Հաճախորդի բոլոր Հաշիվներից գանձել (առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարության) Բանկին վճարման ենթակա բոլոր պարտավորությունների գումարները՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով Բանկից ստացված և մարման ժամկետը լրացած վարկերի մարման գումարները, ինչպես նաև Բանկի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վերջինիս վճարման ենթակա գումարները:

4.14 Հաճախորդն իրավունք ունի կարգադրել Բանկին Հաշվից դրամական միջոցներ դուրս գրել երրորդ անձանց պահանջով: Բանկն ընդունում է այդ կարգադրությունները, պայմանով, որ դրանցում գրավոր նշվեն անհրաժեշտ տվյալներ, որոնք հնարավորություն են ընձեռում

համապատասխան պահանջը ներկայացնելիս նույնականացնել նման պահանջի իրավունք ունեցող երրորդ անձին: Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց հետ Հաճախորդի կնքած գործարքներից բխող կարգադրությունները կատարելու համար:

4.15 Բանկն անակցեպտ կարգով կարող է Հաշվից դուրսգրել հարկերի և այլ պարտադիր վճարների գումարները, եթե Բանկի համար այդպիսի պարտականություն սահմանված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, դատարանի վճռով, (ներառյալ՝ կատարողական փաստաթղթերի հիման վրա դրամական միջոցների դուրսգրման հայտ (որոշում) ստանալու դեպքում):

4.16 Հաճախորդը չի կարող հետ կանչել Բանկի կողմից կատարման ընդունված վճարման հանձնարարականը, եթե այլ բան նախատեսված չէ Բանկի և Հաճախորդի գրավոր համաձայնությամբ:

4.17 Եթե Բանկի և Հաճախորդի միջև համաձայնեցված է վճարման հանձնարարականի կատարման որոշակի օր, Հաճախորդը կարող է հետ կանչել վճարման հանձնարարականը մինչև հանձնարարականի կատարման օրվան նախորդող Բանկային օրվա ավարտը:

4.18 Վճարման հանձնարարականները Հաճախորդի կողմից հետ կանչելիս Բանկը չի ապահովում միջոցների վերադարձը, եթե միջնորդ բանկերից և/կամ ստացողներից հնարավոր չի լինում ետ վերադարձնել միջոցները:

4.19 Հաշիվներով կատարվող գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությունը արձանագրվում է քաղվածքների ձևով և Հաճախորդի պահանջով՝ Սակագներով նախատեսված վճարի դիմաց, տրամադրվում է վերջինիս նման պահանջ ներկայացնելու հաջորդ բանկային օրը:

4.20 Օրենքով սահմանված կարգով Բանկը Ֆիզիկական անձ, այդ թվում անհատ ձեռնարկատեր Հաճախորդին տրամադրում է քաղվածք առնվազն երեսնօրյա պարբերականությամբ, եթե հաշվետու ժամանակահատվածում Հաշիվը դեբետագրվել և/կամ կրեդիտագրվել է:

4.21 Դիմում-պայմանագրի կամ պայմանագրի կնքման համար հիմք հանդիսացող Հաճախորդի կողմից ստորագրվող Բանկի կողմից սահմանված այլ տիպային փաստաթղթի ստորագրմամբ Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը քաղվածքները և Հաճախորդին պարտադիր ներկայացման ենթակա տեղեկատվության ստանալ էլեկտրոնային եղանակով՝ Դիմում-պայմանագրում, պայմանագրի կնքման համար հիմք հանդիսացող Հաճախորդի կողմից ստորագրվող այլ տիպային փաստաթղթում նշված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով և (կամ) Բանկ-Հաճախորդ օնլայն հեռակառավարման համակարգի միջոցով՝ նշված համակարգով Հաճախորդին սպասարկելու վերաբերյալ կնքված պայմանագրի առկայության դեպքում, եթե Հաճախորդի և Բանկի գրավոր համաձայնությամբ քաղվածքների և Հաճախորդին պարտադիր ներկայացման ենթակա տրամադրման այլ եղանակ չի նախատեսվում:

4.22 Կողմերն ընդունում են, որ քաղվածքները համարվում են հաստատված Հաճախորդի կողմից, եթե դրանք ստանալուց հետո 10-օրյա ժամկետում Հաճախորդը Բանկին գրավոր առարկություն չի ներկայացնում:

4.23 Բանկը պատասխանատվություն չի կրում քաղվածքներն ուղարկելիս բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների բացահայտման համար, եթե դա տեղի է ունեցել կապի կազմակերպությունների մեղքով, ինչպես նաև քաղվածքների կորուստի կամ հափշտակության, կամ Բանկի հսկողությունից դուրս գտնվող այլ գործոնի ազդեցության հետևանքով:

4.24 Հաշվից միջոցներ դուրս գրելու Հաճախորդի իրավունքը կարող է սահմանափակվել, օրենքով և այլ իրավական ակտերով դրա համար լիազորված անձանց/մարմինների պահանջով, ինչպես նաև Հաճախորդի հետ կնքված գործարքներով նախատեսված դեպքերում և կարգով: Այդ դեպքերում Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի Հաշվից միջոցներ դուրս գրելու իրավունքը սահմանափակելու համար:

4.25 Բանկն իրավունք ունի դադարեցնել, կասեցնել և/կամ սահմանափակել այն Հաշիվների սպասարկումը, որոնցով գործառնություններ չեն իրականացվել 12 (տասներկու) օրացուցային ամիս անընդմեջ, ընդ որում, սույն կետի և 4.26-րդ կետի իմաստով հաշվով գործառնություններչեն համարվում Բանկի կողմից հաշվի սպասարկման վճարի կամ Բանկի առջև

Հաճախորդի այլ պարտավորությունների դիմաց համապատասխան դրամական միջոցների գանձման (հաշվանցի), ինչպես նաև՝ դատարանի վճռի հիման վրա հաշվից միջոցների բռնագանձման դեպքերը: Այդ Հաշիվները կարող են դարձյալ ակտիվացվել Հաճախորդի կողմից ներկայացված դիմումի հիման վրա՝ Սակագներով նախատեսված վճարները վճարելու պայմանով:

4.26 Բանկն իրավունք ունի առանց դատարան դիմելու միակողմանիորեն փակել Հաճախորդի Հաշիվները, եթե Բանկում բացված Հաճախորդի բոլոր Հաշիվների մնացորդները զրոյական են և դրանցով գործարքներ չեն կատարվել վերջին մեկ օրացուցային տարվա ընթացքում: Ընդ որում, Հաշվով գործարքներ չեն համարվում Բանկի նախաձեռնությամբ կատարված գործարքները՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով միջնորդավճարների գանձումը, տոկոսագումարների վճարումը:

4.27 Հաշիվները ենթակա չեն փակման, եթե՝

4.27.1 Հաճախորդը Բանկի նկատմամբ ունի պարտավորություններ, և/կամ

4.27.2 Հաճախորդն ունի գործող ժամկետային ավանդի պայմանագիր, և այդ Հաշիվներով կատարվում են Հաճախորդի գործող ժամկետային ավանդային պայմանագրով ավանդի ներդրման, ավանդի տոկոսագումարների վճարման և ավանդային հաշվով այլ գործարքներ, և/կամ

4.27.3 Հաճախորդի Հաշվի վրա առկա է արգելանք՝ ԴԱՀԿ-ի, դատարանի և հարկային մարմինների որոշումներով, և/կամ

4.27.4 հաշիվը ծանրաբեռնված է գրավով և չկա հաշիվը փակելու վերաբերյալ գրավառուի համաձայնությունը:

4.28 Հաճախորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ փակել Հաշիվը՝ Բանկին սահմանված ձևի դիմում ներկայացնելով: Բանկը փակում է Հաշիվը, պայմանով, որ առկա չեն Հաշվի նկատմամբ արգելանքներ կամ Հաշվի փակումը սահմանափակող այլ գործոններ: Հաշիվը փակելու դեպքում Բանկը՝ Հաճախորդի Հաշվին առկա գումարից նախապես մարում է Բանկի նկատմամբ Հաճախորդի այդ պահին ունեցած պարտավորությունները: Պարտավորությունների մարումից հետո Հաշվին առկա գումարը վերադարձվում է Հաճախորդին՝ հաշվի փակման դիմումում նշված եղանակով:

## 5.ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻ ՀԱՏՈՒԿ ՀԱՇԻՎՆԵՐ

5.1 Կառուցապատողի Հատուկ հաշիվների վրա տարածվում են սույն Պայմանների 4-րդ գլխով սահմանված Հաշիվներին վերաբերվող բոլոր դրույթները այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն գլխի դրույթներին:

5.2 Կառուցապատողի հատուկ հաշիվները բացվում են Բանկի կողմից սահմանված փաստաթղթերը ներկայացվելու դեպքում՝ Բանկի սահմանած ձևի Դիմում-պայմանագրի, պայմանագրի կամ Բանկի կողմից սահմանված այլ տիպային փաստաթղթի հիման վրա: Սույն Պայմանները, Սակագները, ինչպես նաև տվյալ տեսակի Հաշվի առանձնահատկությունները կարգավորող Բանկի կողմից ընդունված այլ փաստաթղթերը միասին կազմում են Բանկի և Հաճախորդի միջև կնքված պայմանագրի անբաժանելի մասը:

5.3 Կառուցապատողի Հիմնական Հատուկ հաշիվը բացվում է ՀՀ դրամով: Կառուցապատողի համար կարող է բացվել նաև Կառուցապատողի Լրացուցիչ Հատուկ հաշիվ (Լրացուցիչ հատուկ հաշիվ բացվելու դեպքում՝ ՀՀ դրամով Հատուկ հաշիվը այսուհետ՝ նաև Հատուկ հիմնական հաշիվ) Բանկի կողմից սահմանված նաև այլ արժույթներով, որով տվյալ Գնորդի մասով գործառնություն է կատարվում, եթե Կառուցապատողի և Գնորդի միջև կնքված Գնման իրավունքի պայմանագրում առկա է համապատասխան համաձայնություն Կառուցապատողի Հիմնական Հատուկ հաշվին մուտքագրվող գումարները համապատասխան արտարժույթի փոխարկման և Կառուցապատողի Լրացուցիչ հատուկ հաշվին մուտքագրման վերաբերյալ: Հատուկ հաշվով իրականացվող գործառնությունների տեսակները սահմանվում են Բանկի կողմից ՀՀ օրենսդրության և Կառուցապատողի հետ կնքված պայմանագրին համաձայն: Յուրաքանչյուր Հատուկ հաշիվ սպասարկվում է միայն մեկ արժույթ:

5.4 Կառուցապատողի Հատուկ հաշվի մնացորդի նկատմամբ տոկոսները հաշվարկվում և վճարվում են համաձայն Բանկում գործող Սակագների, մուտքագրվելով Կառուցապատողի համար Բանկում բացված համապատասխան արժույթով Հաշիվներին: Ընդ որում, եթե Կառուցապատողը Բանկում միևնույն արժույթով մի քանի հաշիվ ունի, Բանկը տոկոսների վճարման հաշիվը ընտրում է իր հայեցողությամբ, եթե Կառուցապատողը գրավոր տոկոսների վճարման համապատասխան արժույթով կոնկրետ հաշիվ չի նշում:

5.5 Բանկը Կառուցապատողի Հատուկ հաշվից միջոցները դուրս է գրում Կառուցապատողի Հատուկ հաշվին առկա դրամական միջոցների սահմաններում: Հատուկ հաշվից դրամական միջոցները կարող են դուրս գրվել հետևյալ դեպքերում՝

5.5.1 Կառուցապատողի կարգադրությամբ՝ Կառուցապատողի Հիմնական հաշվից Կառուցապատողի Լրացուցիչ Հատուկ հաշվին փոխանցման նպատակով, եթե առկա է սույն Պայմանների 5.3 կետով սահմանված գրավոր համաձայնությունը Կառուցապատողի և Գնորդի միջև,

5.5.2 Կառուցապատողի կարգադրությամբ Հաշվին փոխանցման նպատակով՝

- Գնորդի կողմից մուտքագրված և Հատուկ կամ Լրացուցիչ հաշվում առկա գումարի չափով, եթե ձեռքբերվող գույքի մասով Կառուցապատողի և Գնորդի միջև կնքվել է սեփականության իրավունքի փոխանցման ակտ և կատարվել է Գնորդի սեփականության իրավունքի պետական գրանցում:
- Գնորդի կողմից մուտքագրված գումարի մի մասի չափով, եթե Կառուցապատողի և Գնորդի միջև կնքված պայմանագրով նախատեսվել է Կառուցապատողի Հատուկ հաշվին մուտքագրվող գումարների գրավադրում հօգուտ Գնորդի կամ Գնորդի վարկատուի և Կառուցապատողի և Գնորդի միջև կնքված պայմանագրով կամ դրա փոփոխություններով սահմանվել է Գնորդի կողմից մուտագրված գումարի այդ մասի նկատմամբ գրավի իրավունքի վաղակետ դադարեցում: Ընդ որում, հօգուտ Գնորդի վարկատուի գրավադրման դեպքում Կառուցապատողը և Գնորդը նախքան Գնորդի կողմից Հատուկ հաշվին մուտքագրված գումարի մասը գրավից ազատելու մասին համաձայնությունը կնքելը պետք է ապահովի այդ կապակցությամբ Գնորդի վարկատուի համաձայնությունը:
- Գնորդի կողմից մուտքագրված գումարի նկատմամբ հաշվարկված տուժանքի չափով՝ նվազեցված Կառուցապատողի Հաշվին գրավից ազատման հիմքով արդեն իսկ փոխանցված գումարի չափով, եթե շինարարության ավարտի պետական գրանցումից հետո վեցամսյա ժամկետում անշարժ գույքի սեփականության իրավունքի փոխանցման ակտը չի կնքվել, Գնման իրավունքի պայմանագիրը վաղաժամկետ լուծվել է կամ անվավեր է ճանաչվել և այդ հանգամանքների համար պատասխանատու է Գնորդը: Սույն մասում նշված հանգամանքները համապատասխանաբար հաստատվում են
    1. Սեփականության իրավունքի փոխանցման ակտը չկնքվելու դեպքում Կառուցապատողի կողմից ներկայացված պահանջով և այն Գնորդին ներկայացնելու պահից 5 օրվա ընթացքում Գնորդի կողմից իր պատասխանատվությունը բացառող հանգամանքները Բանկին և Կառուցապատողին չներկայացնելու հանգամանքով: Ընդ որում, Գնորդի կողմից առարկություն ներկայացվելու դեպքում Կառուցապատողի և Գնորդի միջև վեճը լուծվում է դատական կարգով, իսկ տուժանքի փոխանցման հիմք է հանդիսանում օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, որը պարունակում է վճարման ենթակա տուժանքի հստակ չափը:
    2. Կառուցապատողի և Գնորդի միջև կնքված Գնման իրավունքի պայմանագիրը լուծելու մասին համաձայնագրով և այդ համաձայնագրի պետական գրանցման մասին ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տեղեկատվությամբ: Ընդ որում, այդ համաձայնագրում պետք է հստակ սահմանված լինի վճարման ենթակա տուժանքի չափը:

3. Կառուցապատողի և Գնորդի միջև կնքված Գնման իրավունքի պայմանագիրը լուծելու կամ անվավեր ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, որը պարունակում է վճարման ենթակա տուժանքի հստակ չափը:

5.5.3 Առանց Կառուցապատողի կարգադրության Գնորդի պահանջով Գնորդին կանխիկ տրամադրման կամ Գնորդի/գնորդի վարկատուի բանկային հաշվին փոխանցման միջոցով, եթե շինարարության ավարտի պետական գրանցման ամսաթվից հետո վեցամսյա ժամկետում անշարժ գույքի սեփականության իրավունքի փոխանցման ակտը չի կնքվել կամ Գնման իրավունքի պայմանագիրը վաղաժամկետ լուծվել է կամ անվավեր է ճանաչվել: Ընդ որում, նշված հանգամանքների համար Գնորդի պատասխանատու լինելու և Կառուցապատողի օգտին Գնորդի նկատմամբ տուժանք նախատեսված լինելու դեպքում փոխանցման գումարը չի կարող ավել լինել մուտքագրված գումարի և դրա նկատմամբ կիրառված տուժանքի տարբերության չափից: Սույն մասում նշված հանգամանքները համապատասխանաբար հաստատվում են.

1. Սեփականության իրավունքի փոխանցման ակտը չկնքվելու դեպքում Գնորդի ներկայացրած պահանջով և այն Կառուցապատողին ներկայացնելու պահից 5 օրվա ընթացքում Կառուցապատողի կողմից սեփականության իրավունքի փոխանցման ակտը Բանկին և Գնորդին չներկայացվելու հանգամանքով: Ընդ որում, Կառուցապատողը սույնով հայտատարում է, որ այս կարգի պահպանմամբ Գնորդին վճարում կատարելու դեպքում Բանկին ազատում է ցանկացած իր բոլոր հնարավոր և իրական պահանջից: Սույն ենթակետով ստացված պահանջի շրջանակում Կառուցապատողի կողմից տուժանքի վճարման պահանջ ներկայացվելու դեպքում տուժանքի մասով գործընթացը շարունակվում է 5.5.2 կետում սահմանված կարգով:
2. Կառուցապատողի և Գնորդի միջև կնքված Գնման իրավունքի պայմանագիրը լուծելու մասին համաձայնագրով և այդ համաձայնագրի պետական գրանցման մասին ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տեղեկատվությամբ:
3. Կառուցապատողի և Գնորդի միջև կնքված Գնման իրավունքի պայմանագիրը լուծելու կամ անվավեր ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտով:

5.5.4 Առանց Կառուցապատողի կարգադրության՝ Կառուցապատողի շինարարության հասցեում հողամասի սեփականատիրոջ իրավունքները լրիվ կամ մասնակի ձեռք բերած այլ կառուցապատողի համար բանկում, գանձապետարանում կամ նոտարի դեպոզիտում գործող կառուցապատողի հատուկ հաշվին՝ տվյալ կառուցապատողի գույքային իրավունքները գրանցելու մասին ապացույց ներկայացնելու դեպքում ինչը հավաստվում է գույքային իրավունքի գրանցումը հիմնավորող փաստաթղթերով (սեփականության վկայական) և բացված հատուկ հաշվի վերաբերյալ տեղեկանքում (եթե հատուկ հաշիվը չի գտնվում Բանկում), որը առնվազն պարունակում է նշում հաշվի համարի, արժույթի, կառուցապատողին և հողամասը նույնականացնող տվյալների վերաբերյալ՝ տվյալ Կառուցապատողի ձեռք բերած հողամասի վրա կառուցվող շենքում գնման իրավունք ունեցող Գնորդների կուտակած կանխավճարների գրավադրված մնացորդի չափով:

5.6 Եթե Հատուկ հաշվին գնորդի կողմից մուտքագրված գումարների վերադարձը Գնորդին իրականացվում է ՀՀ դրամով՝ Կառուցապատողի Հիմնական հատուկ հաշվից, Կառուցապատողը պարտավորվում է ապահովել, որ իր և Գնորդի միջև կնքված Գնման իրավունքի պայմանագրում առկա լինի համաձայնություն Լրացուցիչ Հատուկ հաշվում առկա արտարժույթը ՀՀ դրամի փոխարկելու դեպքում սկզբնական մուտքագրված գումարի չափից պակաս լինելու դեպքում Բանկին ազատում է այդ կապակցությամբ Գնորդի ցանկացած պահանջներից, իսկ նման պահանջների դեպքում պարտավորվում է Բանկի փոխարեն և նրա անունից լրիվ պատասխանատվություն կրել, իսկ Բանկի կողմից այդ պահանջները բավավարելու դեպքում անվերապահորեն հատուցել Բանկի կրած բոլոր ծախսերը:

5.7 Կառուցապատողի և Գնորդի միջև կնքված Գնման իրավունքի պայմանագրում համապատասխան համաձայնության առկայության դեպքում Կառուցապատողի Հիմնական Հատուկ հաշվին մուտքագրվող գումարները կարող են Կառուցապատողի հանձնարարության համաձայն առավելագույնը մեկ բանկային օրվա ընթացքում Սակագների համաձայն փոխարկվել

Կառուցապատողի Լրացուցիչ Հատուկ հաշվի արժույթի և մուտքագրվել Կառուցապատողի Լրացուցիչ Հատուկ հաշվին:

5.8 Կառուցապատողի հատուկ հաշվին անշարժ գույքի ձեռքբերման նպատակով դրամական միջոցների մուտքագրումը իրականացվում է Կառուցապատողի կողմից տվյալ անշարժ գույքի Գնման իրավունքի պայմանագրի նոտարական կարգով վավերացված պայմանագրի պատճենը և այդ պայմանագրի պետական գրանցման վկայականի պատճենը Բանկ ներկայացնելուց հետո:

5.9 Կառուցապատողի հատուկ հաշվին անշարժ գույքի ձեռքբերման նպատակով դրամական միջոցների առաջին մուտքագրումը իրականացվում է անձամբ Գնորդի կողմից Բանկի սահմանված ձևաչափով հայտարարագրի ներկայացման դեպքում:

5.10 Կառուցապատողի հատուկ հաշվին մուտքագրվող դրամական միջոցները մուտքագրման նպատակը պետք է պարտադիր պարունակի Գնորդի անվանումը, Գնման իրավունքի պայմանագրի կոդը, անշարժ գույքի նախագծային համարը ըստ Կառուցապատողի կողմից Բանկին ներկայացված ցանկի, անշարժ գույքի հասցեն, ինչպես նաև վճարման առաջին կամ հերթական լինելու մասին նշում:

5.11 Սույն պայմանների 5.8, 5.9, և 5.10 կետերում առկա պայմանների չպահպանման դեպքում Բանկում չի իրականացնում դրամական միջոցների մուտքագրում Կառուցապատողի հատուկ հաշվին և նախաձեռնում է դրանց վերադարձը Գնորդին: Ընդ որում, մինչև այդ գումարների վերադարձը Գնորդին այդ գումարների Բանկում գտնվելու համար որևէ տոկոս կամ տուժանք Գնորդին չի վճարվում:

5.12 Կառուցապատողի Հիմնական հատուկ հաշվից Գնորդին գումարների վերադարձը իրականացվում է Գնորդի կողմից Բանկի սահմանված ձևաչափով պահանջ և հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու դեպքում:

5.13 Կառուցապատողի Հիմնական Հատուկ հաշվին դրամական միջոցներ կարող են մուտքագրվել միայն ՀՀ դրամով: Այլ արժույթով փոխանցված միջոցները փոխարկվում են Բանկի կողմից տվյալ գործառնության համար իրականացման պահի դրությամբ գործող փոխարժեքով և մուտքագրվում են Կառուցապատողի Հիմնական Հատուկ հաշվին:

5.14 Լրացուցիչ Հատուկ հաշվին մուտքերը կարող են իրականացվել բացառապես հիմնական Հատուկ հաշվից Սակագներով սահմանված փոխարժեքով փոխարկում իրականացնելու արդյունքում:

5.15 Բանկը դիտարկում է Կառուցապատողի Հատուկ հաշվին Գնորդների վճարած կանխավճարները որպես Գնորդի օգտին գրավադրված (գրավադրման կանխավարկած), քանի դեռ Կառուցապատողը Բանկին չի ներկայացրել ապացույցներ Հատուկ Հաշվում առկա դրամական միջոցների չգրավադրման կամ գրավի իրավունքի մասնակի կամ լրիվ դադարման մասին:

5.16 Հատուկ հաշվին մուտքագրվող բոլոր դրամական միջոցները Բանկի կողմից արգելադրվում են և հասանելի չեն Կառուցապատողին օգտագործման համար բացառությամբ սույն պայմաններով և օրենքով սահմանված դեպքերի:

5.17 Բանկն ունի գրավի կամ հաջորդող գրավի (եթե Կառուցապատողի և Գնորդի միջև առկա է Հատուկ հաշվին մուտքագրվող դրամական միջոցները Գնորդի օգտին գրավադրման համաձայնություն) իրավունք Հատուկ հաշվին առկա բոլոր միջոցների նկատմամբ՝ որպես Բանկի և Կառուցապատողի միջև առկա և/կամ հետագայում առաջացող Կառուցապատողի բոլոր պարտավորությունների կատարման ապահովում, եթե այլ բան սահմանված չէ այլ պայմանագրերով, կանոններով, պայմաններով կամ օրենքով: Կառուցապատողը չի կարող Գնորդից բացի որևէ երրորդ անձի օգտին գրավ դնել Հաշվին առկա միջոցները՝ առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության:

5.18 Բանկը Սակագների համաձայն Հատուկ հաշվին գնորդի կողմից մուտքագրված գումարների վերաբերյալ Գնորդին տրամադրում է տեղեկատվություն իր կողմից մուտքագրված գումարների մուտքագրման օրերի, ելքագրումների և մնացորդի մասին ըստ գույքի (գույքերի):

## 6. ԱՎԱՆԴՆԵՐ

6.1 Հաճախորդը կարող է Բանկում ներդնել ավանդ՝ ավանդի գումարի նկատմամբ տոկոսներ ստանալու պայմանով: Ավանդի ներդրման պայմանները սահմանվում են Բանկի և Հաճախորդի միջև կնքվող ավանդային պայմանագրով կամ համապատասխան պայմանագրի կնքման համար հիմք հանդիսացող Բանկի կողմից սահմանված այլ տիպային փաստաթղթով (այսուհետ՝ Ավանդային պայմանագիր), որի անբաժանելի մասն են կազմում Պայմանները և տվյալ ավանդատեսակի հատուկ պայմանները:

6.2 Ավանդի գումարը կարող է համալրվել ինչպես Հաճախորդի, այնպես էլ Հաճախորդի անունով երրորդ անձանց կողմից ստացված դրամական միջոցներով: Հաճախորդի հետ Ավանդային պայմանագիր կնքելու դեպքում Բանկն իրավունք ունի հաճախորդի բանկային հաշվից ավանդի գումարի չափով դրամական միջոցները դուրս գրել և փոխանցել ավանդային հաշվին:

6.3 Ավանդի գումարի նկատմամբ հաշվարկվում են տոկոսներ՝ Սակագներով և տվյալ ավանդի պայմաններով նախատեսված կարգով և չափով: Տոկոսները հաշվարկվում և վճարվում են ՀՀ դրամով՝ անկախ ավանդի արժույթից, եթե ավանդային պայմանագրով այլ բան սահմանված չէ:

6.4 Ավանդն ընդունելով՝ Բանկը Հաճախորդի համար բացում է առանձին ավանդային հաշիվ և կատարում այդ հաշվի համալրումը Հաճախորդի բանկային հաշվից: Ավանդային հաշվով բանկային գործառնություններ չեն կատարվում, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի գրավոր համաձայնությամբ կամ Բանկի և Հաճախորդի միջև համապատասխան ծառայության մատուցումից բխող հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերով: Ավանդի նկատմամբ հաշվարկված տոկոսները փոխանցվում են Հաճախորդի բանկային Հաշվին, եթե Ավանդային պայմանագրով այլ բան համաձայնեցված չէ: Ավանդի ներդրումը հավաստվում է ավանդային հաշվի քաղվածքով: Ավանդային հաշվին գումարների մուտքագրումները, ինչպես նաև ավանդային հաշիվներից գումարների ելքագրումները հավաստող քաղվածքները Ավանդատուին տրամադրվում են միայն վերջինիս կողմից համապատասխան պահանջ ներկայացվելու դեպքում բացառությամբ սույն Պայմանների 4.20 կետով սահմանված դեպքի: Սույն կետով սահմանված քաղվածքների տրամադրման կարգի և սույն Պայմանների մաս կազմող Ավանդային պայմանագրի անբաժանելի մաս կազմող այլ փաստաթղթերով սահմանված քաղվածքների տրամադրման կարգի միջև հակասություններ առաջանալու դեպքում գործում է սույն կետով սահմանված կարգը:

6.5 Ավանդի ժամկետը սահմանվում է Ավանդային պայմանագրով: Իրավաբանական անձ հաճախորդի՝ ավանդը հետ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել Բանկի և Հաճախորդի միջև կնքված պայմանագրով, ինչի դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի պահանջը չկատարելու համար:

6.6 Ժամկետային ավանդի գումարը կամ դրա մի մասը մինչև սահմանված ժամկետի ավարտը Ավանդատուի պահանջով վերադարձնելիս՝ վերադարձվող մասի նկատմամբ Բանկը տոկոսները հաշվարկում և Ավանդատուին վճարում է Բանկի սակագներով սահմանված բանկային հաշվի օրական մնացորդի վրա կիրառվող տարեկան տոկոսադրույքով՝ կատարելով նախկինում վճարած տոկոսների վերահաշվարկ՝ վերադարձվող Ավանդի մասով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով և տվյալ ավանդատեսակի պայմաններով: Ավանդի գումարի մի մասը նվազեցնելուց հետո ավանդային պայմանագիրը գործում է Բանկի տնօրինության տակ մնացած ավանդի մասով, և դրա դիմաց տոկոսները շարունակվում են հաշվեգրվել ավանդային պայմանագրով նախատեսված չափով:

6.7 Այն դեպքում, երբ Բանկի հետ համաձայնեցված կարգով Հաճախորդը վաղաժամկետ հետ է պահանջում ավելացման իրավունքով ներդրված ավանդի մի մասը, նվազեցումը կատարվում է ավանդի գումարի վերջին ավելացումից և/կամ ավելացումներից (ներառյալ՝ Բանկի կողմից վճարված տոկոսներից)՝ ժամանակագրական հակառակ հաջորդականությամբ:

6.8 Ավանդի վերադարձման ժամկետը չերկարաձգվելու դեպքում ավանդի գումարը և չվճարված տոկոսները փոխանցվում են Հաճախորդի բանկային Հաշվին՝ առանց լրացուցիչ

պայմանագրի կամ համաձայնագրի կնքման, և դրանց վրա հետագա տոկոսների հաշվեգրումը կատարվում է Բանկի սակագներով սահմանված բանկային հաշվի օրական մնացորդի վրա կիրառվող տարեկան տոկոսադրույքով, եթե գրավոր ձևով այլ բան համաձայնեցված չէ:

6.9 Ավանդի ժամկետը կարող է երկարաձգվել.

6.9.1 Ավանդային պայմանագրի գործողության ընթացքում մինչև ավանդի ժամկետի ավարտի օրը ներառյալ, Բանկի կողմից սահմանված ձևի Ավանդի պայմանագրում փոփոխություններ կատարելու համաձայնագրի, դիմում-համաձայնագրի կամ Բանկի կողմից սահմանված տիպային այլ փաստաթղթի հիման վրա: Ընդ որում,սույն ենթակետով սահմանված մեկ փաստաթղթով երկարաձգումներ կկատարվեն առավելագույնը 1 (մեկ) անգամ:

6.9.2 Էլեկտրոնային եղանակով.

5.9.2.1 Ֆիզիկական անձանց դեպքում՝ Ավանդատուի կողմից Ավանդային պայմանագրում կամ Բանկի կողմից սահմանված ձևի Հաճախորդի կողմից ստորագրվող այլ տիպային փաստաթղթում նշված էլեկտրոնային փոստի հասցեից Բանկի՝ նշված փաստաթղթերից որևէ մեկում նշված էլեկտրոնային փոստի հասցեին Բանկի պահանջներին համապատասխանող ավանդի ժամկետը երկարաձգելու պահանջ ներկայացվելու միջոցով: Ընդ որում, Բանկը հիմք է ընդունում Հաճախորդի կողմից Բանկին տրամադրված և Բանկում գրանցված վերջին էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկված պահանջը: Էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացված պահանջը համապատասխանում է Բանկի պահանջներին, եթե ներառում է սույն պայմանագրի վավերապայմանները (պայմանագրի համար և կնքման տարի/ամիս/ամսաթիվ, Ավանդի գումար, արժույթ և այլն) և համապատասխանում է տվյալ ավանդատեսակի համար երկարաձգման օրվա դրությամբ Բանկի կողմից սահմանված պայմաններին:

5.9.2.2 Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ Ավանդի վերադարձման ժամկետից նվազագույնը 5 (հինգ) աշխատանքային օր առաջ Ավանդային պայմանագրում կամ Բանկի կողմից սահմանված ձևի Հաճախորդի կողմից ստորագրվող այլ տիպային փաստաթղթում նշված Բանկի էլեկտրոնային փոստի նշված փաստաթղթերից որևէ մեկում նշված Ավանդատուի էլեկտրոնային փոստի հասցեից Բանկի համար ընդունելի ձևի Ավանդի վերադարձման ժամկետի երկարաձգման վերաբերյալ գրություն ուղարկվելու եղանակով, եթե Ավանդատուն Բանկի կողմից նշված գրությունը ստանալը էլեկտրոնային եղանակով հաստատվելու օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում երկարաձգումը մերժելու վերաբերյալ Բանկի կողմից ծանուցում չի ստանում: Բանկը հիմք է ընդունում Հաճախորդի կողմից Բանկին տրամադրված և Բանկում գրանցված վերջին էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկված պահանջը: Ընդ որում տվյալ դեպքում Ավանդի վերադարձման ժամկետը կհամարվի երկարաձգված երկարաձգման ամսաթվին Բանկում գործող պայմաններով, իսկ Ավանդի վերադարձման ժամկետի երկարաձգման ամսաթիվ կհանդիսանա Ավանդի վերադարձման ժամկետի օրը:

6.9.3 Բանկի կողմից միակողմանիորեն՝ Ավանդային պայմանագրով Բանկում ներդրված դրամական միջոցները և դրանից բխող պահանջի իրավունքը ի ապահովումն իր կամ երրորդ անձի՝ Բանկի նկատմամբ պարտավորությունների կատարման գրավադրված լինելու դեպքում՝ առավելագույնը համապատասխան պարտավորությունների լրիվ ծավալով կատարման ժամկետով՝ երկարաձգման օրվա դրությամբ Բանկում գործող պայմաններով:

6.10 Եթե ավանդի վերադարձի օրը և/կամ հաշվեգրված տոկոսների վճարման օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վերադարձը կատարվում է ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ ոչ աշխատանքային օրերի համար վճարելով տոկոսներ՝ Ավանդի պայմանագրով նախատեսված վերադարձի օրվան նախորդող օրվա համար հաշվարկված չափով:

6.11 Եթե Ավանդը ներդրվում է արտարժույթով, ապա Հաճախորդը Ավանդային պայմանագիրը ստորագրելով հավաստում է, որ գիտակցում է արտարժույթի փոխարժեքի փոփոխումից բխող հնարավոր անբարենպաստ հետևանքները, և նախընտրում է Ավանդը ներդնել արտարժույթով:

6.12 Ավանդի գումարի (դրա ավելացված մասի) վրա տոկոսները հավելագրվում են ավանդը (դրա ավելացված մասը) ավանդային հաշվին մուտք լինելուն հաջորդող օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:

6.13 Գործառնական օրվա ավարտից հետո կատարվող ներդրումը և/կամ համալրումները համարվում են Բանկ մուտքագրված հաջորդ գործառնական օրով:

6.14 Բանկը, որպես հարկային գործակալ, Ավանդատուին հասանելիք տոկոսագումարը վճարելիս պահում և պետական բյուջե է փոխանցվում ՀՀ օրենսդրությամբ, իսկ ԼՂՀ-ում գործող մասնաճյուղերում՝ ԼՂՀ օրենսդրությամբ գանձման ենթակա հարկերը:

6.15 Հօգուտ երրորդ անձի ընդունված ֆիզիկական անձանց ավանդների մասով Բանկը պարտավորվում է ավանդի գումարը և տոկոսները վերադարձնել/վճարել Ավանդային պայմանագրում նշված երրորդ անձին, վերջինիս կողմից Ավանդատուի իրավունքների վրա հիմնված առաջին իսկ գրավոր պահանջը ներկայացվելու կամ գրավոր եղանակով Բանկին Ավանդատուի իրավունքներից օգտվելու մտադրության մասին տեղեկացվելու դեպքում:

6.16 Եթե երրորդ անձը մինչև ավանդի ժամկետի ավարտի օրը (վերադարձի օրը ոչ աշխատանքային օրվա հետ համընկնելու դեպքում՝ այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը)՝ ներառյալ Բանկին գրավոր պահանջ չի ներկայացրել և ավանդի ժամկետը չի երկարաձգվում, ապա ավանդի գումարը և չվճարված տոկոսները վերադարձվում են/վճարվում են Ավանդատուի բանկային Հաշվին:

Եթե երրորդ անձը մինչև ավանդի վերադարձման ամսաթիվը(վերադարձի օրը ոչ աշխատանքային օրվա հետ համընկնելու դեպքում՝ այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը)՝ գրավոր եղանակով Բանկին տեղեկացրել է Ավանդատուի իրավունքներից օգտվելու մտադրության մասին, սակայն գրավոր պահանջ չի ներկայացրել, և ավանդի ժամկետը չի երկարաձգվել, ապա ավանդի գումարը և չվճարված տոկոսները վերադարձվում են/վճարվում են երրորդ անձի բանկային հաշվին, իսկ Բանկում բանկային հաշվի բացակայության դեպքում՝ փոխանցվում են այլ հաշվի, երրորդ անձի համապատասխան գրավոր դիմումն ստանալուց հետո 7 (յոթ) օրվա ընթացքում կամ տնօրինվում են վերջինիս կողմից սահմանված այլ եղանակով:

6.17 Ավանդատուին (Ավանդատուի իրավունքներ ձեռք բերած երրորդ անձին) իր ցանկությամբ կարող է ուղարկվել Ավանդի ժամկետի ավարտի վերաբերյալ SMS հաղորդագրություններ: Այդ ծառայությունը ներկայացվում է համաձայն սահմանված սակագների և Բանկը պատասխանատվություն չի կրում SMS-ների չառաքման կամ ուշացումով առաքման համար հեռախոսահամարի անհասանելի լինելու կամ կապի օպերատորի տեխնիկական կամ այլ խնդիրների համար:

6.18 Ավանդատուին բանկային գրքույկ չի տրամադրվում:

6.19 Ավելացման իրավունքով ավանդատեսակի դեպքում Ավանդը կարող է համալրվել նաև երրորդ անձանց կողմից: Ավանդատուն Ավանդային պայմանագիր կնքելով կամ ավանդի ժամկետը երկարաձգելով լիազորում է երրորդ անձանց՝ իր ավանդը համալրելու դեպքում որպես ավանդ ներդրվող գումարը մուտքագրել Ավանդատուի բանկային հաշվին և մուտքագրված գումարը փոխանցել Ավանդատուի ավանդային հաշվին: Ավանդատուն նաև թույլատրում է Բանկին՝ երրորդ անձանց կողմից իր Ավանդը համալրելու նպատակով Ավանդատուի բանկային հաշվին գումարներ մուտքագրվելու դեպքում, առանց Ավանդատուի լրացուցիչ կարգադրության գանձել համապատասխան գումարները Ավանդատուի բանկային հաշվից և փոխանցել Ավանդատուի ավանդային հաշվին:

6.20 Ավելացման իրավունքով ավանդատեսակը կարող է համալրվել Ավանդատուի կողմից Հաշվի բացման դիմում-պայմանագրում, Ավանդային պայմանագրում կամ Բանկի կողմից սահմանված ձևի Հաճախորդի կողմից ստորագրվող այլ տիպային փաստաթղթում նշված Ավանդատուի էլեկտրոնային փոստի հասցեից Բանկի՝ միևնույն փաստաթղթում նշված էլեկտրոնային փոստի հասցեին իր՝ Բանկում սպասարկվող բանկային հաշվին առկա որոշակի գումար ավանդային հաշվին փոխանցելու վերաբերյալ գրություն ստանալու միջոցով, որի դեպքում Բանկը փոխանցման ենթակա գումարի չափով

դրամական միջոցները առանց Ավանդատուի լրացուցիչ հանձնարարականի գանձում է բանկային հաշվից և փոխանցում է ավանդային հաշվին: Ընդ որում, Բանկը հիմք է ընդունում Հաճախորդի կողմից Բանկին տրամադրված և Բանկում գրանցված վերջին էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկված պահանջը: Էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացված պահանջը առնվազն պետք է պարունակի փոխանցվող գումարի չափը և ավանդային պայմանագրի համարը կամ ավանդային հաշվեհամարը:

## 7.ՉԵԿԱՅԻՆ ԳՐՔՈՒՅԿՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7.1 Առանձին տեսակի Հաշիվներից Բանկում գործող կանոնների համաձայն կանխիկ միջոցներ դուրսգրելու համար Բանկը կարող է առաջարկել անվանական լիմիտավորված դրամարկղային չեկեր (այսուհետ՝ Չեկ): Չեկերը (չեկային գրքույկները) համարվում են Բանկի սեփականությունը և Հաճախորդին տրամադրվում են օգտագործման իրավունքով:

7.2 Բանկի կողմից կարող է սահմանվել յուրաքանչյուր Չեկով դուրս գրվող գումարի առավելագույն սահմանաչափ:

7.3 Չեկերը տրամադրվում են Բանկի կողմից սահմանված ձևի դիմումի հիման վրա, որը ստորագրելով Հաճախորդը հաստատում է, որ ստացել է չեկային գրքույկը, ծանոթացել և ընդունում է Պայմանները, ինչպես նաև տեղյակ է և ընդունում է, որ չեկային գրքույկը Բանկի կողմից ստանալու պահից Պայմանները, չեկերով հաշվարկներ կատարելու համար Բանկի կողմից սահմանած կանոնները (ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ չեկերի լրացման և օգտագործման կանոնները, չեկի սպասարկման կանոններ), Չեկերի սպասարկման հատուկ պայմանները (Բանկի կողմից այդպիսիք հրապարակվելու դեպքում) և Սակագները միասին կազմում են Բանկի և Հաճախորդի միջև կնքված չեկերով գործառնություններ կատարելու վերաբերյալ պայմանագիր:

7.4 Հաճախորդը, չեկային գրքույկ ստանալու դեպքում, պարտավորվում է.

7.4.1 Չեկային գրքույկը չտրամադրել այլ հաճախորդների,

7.4.2 Չստորագրել/չկնքել չլրացված Չեկեր,

7.4.3 Չեկային գրքույկը լրացնել Չեկերի լրացման և օգտագործման կանոններին համապատասխան,

7.4.4 Բանկային հաշվի պայմանագրի լուծման (գործողության դադարեցման) դեպքում չեկային գրքույկը՝ չօգտագործված չեկերի հետ միասին վերադարձնել Բանկին:

7.5 Չեկի (չեկային գրքույկի) կորստի կամ հափշտակման դեպքում Հաճախորդը պարտավոր է Բանկին անհապաղ ծանուցել գործառնական օրվա ընթացքում: Ծանուցումը համարվում է պատշաճ Բանկի կողմից ծանուցագիրը ստանալու պահից: Կորցրած և հափշտակված Չեկը Բանկի կողմից վճարելու հետևանքով առաջացած վնասները կրում է Հաճախորդը, եթե չի ապացուցվում, որ Չեկը վճարվել է Բանկի աշխատակցի դիտավորության կամ անզգուշության հետևանքով:

7.6 Բանկն իրավասու է մերժել վճարմանը ներկայացված Չեկի ընդունումը և(կամ) վճարումը, եթե՝

7.6.1 Չեկը չի համապատասխանում Չեկի լրացման և օգտագործման կանոններին,

7.6.2 Չեկ ներկայացնողը դրա օրինական տերը (չեկով լիազորված անձ) չէ,

7.6.3 Չեկը հետ է կանչված Հաճախորդի կողմից,

7.6.4 Չեկը դուրս է գրված կեղծ ձևաթղթի վրա կամ ստորագրությունը կեղծ է,

7.6.5 Հաճախորդի Չեկերի վճարման համար նախատեսված դրամական միջոցները անբավարար են Չեկում նշված գումարը վճարելու և տվյալ ծառայության համար Սակագներով սահմանված միջնորդավճարը գանձելու համար,

7.6.6 Հաշիվ(ներ)ը արգելադրված է (են),

7.6.7 հայտնի է, որ չեկը գողացված է կամ կորցրած,

7.6.8 Բանկի համար կասկածելի այլ դեպքերում:

7.7 Հաճախորդը բանկային հաշվի/հաշիվների փակման դեպքում պարտավորվում է

7.7.1 Չեկային գրքույկը չտրամադրել այլ հաճախորդների,

7.7.2 Չստորագրել/չկնքել չլրացված Չեկեր,

7.7.3 Չեկային գրքույկը լրացնել Չեկերի լրացման և օգտագործման կանոններին համապատասխան,

7.7.4 Բանկային հաշվի պայմանագրի լուծման (գործողության դադարեցման) դեպքում չեկային գրքույկը՝ չօգտագործված չեկերի հետ միասին վերադարձնել Բանկին:

7.8 Բանկը, Հաճախորդին սույն բաժնով սահմանված կարգով չեկային գրքույկ տրամադրելու դեպքում, Հաճախորդի հաշիվներից կանխիկ գումարների տրամադրումը Չեկերով իրականացնում է համաձայն Բանկի ներքին իրավական ակտերի:

7.9 Չեկի (չեկային գրքույկի) կորստի կամ հափշտակման դեպքում Հաճախորդը Բանկին տեղեկացնում է այդ մասին գործառնական օրվա ընթացքում, գրավոր՝ թղթային կամ էլեկտրոնային եղանակով: Տեղեկացումը համարվում է կայացած միայն Բանկի կողմից ծանուցագիրը ստանալու պահից, հակառակ դեպքում կորցրած և հափշտակված Չեկը Բանկի կողմից վճարելու հետևանքով առաջացած վնասները կրում է Հաճախորդը, եթե չի ապացուցվում, որ Չեկը վճարվել է Բանկի աշխատակցի դիտավորությամբ կամ անզգուշության հետևանքով:

7.10 Բանկն իրավասու է մերժել վճարմանը ներկայացված Չեկի ընդունումը և/կամ վճարումը, եթե՝

7.10.1 Չեկը չի համապատասխանում Չեկի լրացման և օգտագործման կանոններին,

7.10.2 Չեկ ներկայացնողը դրա օրինական տերը (չեկով լիազորված անձ) չէ,

7.10.3 Չեկը հետ է կանչված Հաճախորդի կողմից,

7.10.4 Չեկը դուրս է գրված կեղծ ձևաթղթի վրա կամ ստորագրությունը կեղծ է,

7.10.5 Հաճախորդի Չեկերի վճարման համար նախատեսված դրամական միջոցները անբավարար են Չեկում նշված գումարը վճարելու և տվյալ ծառայության համար Սակագներով սահմանված միջնորդավճարը գանձելու համար,

7.10.6 Հաշիվ(ներ)ը արգելադրված է(են) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

7.10.7 հայտնի է, որ չեկը գողացված է կամ կորցրած,

7.10.8 Բանկի համար կասկածներ առաջացնող այլ դեպքերում:

7.11 Հաճախորդը Հաշվի/հաշիվների փակման դեպքում պարտավորվում է վերադարձնել Բանկի չեկային գրքույկը, եթե առկա են չօգտագործված չեկերի ձևաթղթեր: Չեկային գրքույկը վերադարձվում է գրավոր դիմումի հիման վրա, որի մեջ նշվում են բոլոր չօգտագործված չեկերի ձևաթղթերի համարները:

## 8. ՀԵՌԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ

8.1 Հեռակառավարման համակարգերը տրամադրվում են Հաճախորդի կողմից Դիմում-պայմանագրի ստորագմամբ, որը Բանկի իրավասու անձանց կողմից հաստատվելու պահից, Պայմանների, Սակագների, Բանկի կողմից մատուցվող ծառայությունների ցանկի և համապատասխան ծառայությունից օգտվելու համար Բանկի կողմից սահմանված պայմանների, ուղեցույցների, տեխնիկական նկարագրերի ու այլ փաստաթղթերի հետ միասին կազմում է Բանկի և Հաճախորդի միջև համապատասխան համակարգի միջոցով Հաճախորդին սպասարկելու վերաբերյալ վավեր պայմանագիր:

8.2 Հեռակառավարման համակարգերը տրամադրվում են բանկային հաշիվ ունեցող Հաճախորդներին: Հաճախորդը կարող է Հեռակառավարման համակարգի միջոցով դիտել Հաշվի մնացորդը, ներկայացնել վճարման հանձնարարականներ, արժույթների փոխանակման հայտեր և օգտվել Բանկի կողմից առաջարկվող այլ ծառայություններից:

8.3 Հեռակառավարման համակարգերով Բանկի կողմից առաջարկվող ծառայությունների ցանկն ու դրանցից օգտվելու պայմանները (ուղեցույցները) հաստատվում են Բանկի կողմից և կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխվել:

8.4 Հեռակառավարման համակարգերի միջոցով Հաճախորդների սպասարկումը իրականացվում է միայն Հաճախորդի (Հաճախորդի ներկայացուցչի) մոտ համապատասխան

համակարգից օգտվելու համար անհրաժեշտ ծրագրային և տեխնիկական ապահովվածության առկայության դեպքում, ընդ որում Բանկը Հաճախորդին հեռակառավարման համակարգերի միջոցով ծառայություններ մատուցում է բացառապես Բանկի համար ընդունելի ծրագրային և տեխնիկական ապհովվածության միջոցների կիրառմամբ:

8.5 Պայմանավորված Հեռակառավարման համակարգերի միջոցով մատուցվող ծառայության առանձնահատկություններից, Բանկը Հաճախորդին կարող է տրամադրել հեռակառավարման համակարգերից օգտվելու համար անհրաժեշտ ծրագրային ապահովում՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ բանալիներ, թվային սերտիֆիկատներ, թոքեններ, չիպեր, մուտքի կոդ գեներացնող և այլ սարքավորումներ: Նման սարքավորումները Բանկի սեփականությունն են և Հաճախորդին են տրամադրվում օգտագործման իրավունքով: Բանկն իրավունք ունի պահանջել ցանկացած ժամանակ հետ վերադարձնել կամ փոխարինել այդ սարքավորումները, ինչպես նաև խստացնել/մեղմացնել դրանց օգտագործման կարգը, կամ դադարեցնել դրանց սպասարկումը: Հաճախորդի կողմից Բանկի տրամադրած ծրագրային ապահովումը կրկնօրինակելու, արտատպելու, վերափոխելու դեպքում Բանկն իրավունք ունի Հաճախորդից պահանջել դրա հետ կապված իր կրած վնասների հատուցում:

8.6 Հաճախորդը երաշխավորում է իրեն տրամադրված ծրագրային ապահովման միջոցների պահպանությունը և դրանց օգտագործումը միայն իր (իր ներկայացուցիչների) կողմից և լրիվ ծավալով պատասխանատվություն է կրում ծրագրային ապահովման միջոցների պահպանման և դրանց կորստի կամ երրորդ անձանց դրանք հայտնի դառնալու հետևանքով իր, բանկի և (կամ) երրորդ անձանց համար առաջացած անբարենպաստ հետևանքների՝ մասնավորապես պատճառված վնասների, գործարար համբավի վնասման, իրավունքների կորստի (սահմանափակման) կամ պարտավորությունների առաջացման (ավելացման) համար:

8.7 Հաճախորդը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Բանկին Հեռակառավարման համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ գաղտնաբառերի, ինչպես նաև թվային սերտիֆիկատների և ծրագրային ապահովման այլ միջոցների կորստի, երրորդ անձանց առջև բացահայտման կամ դրա սպառնալիքի առաջացման դեպքում:

8.8 Բանկն իրավունք ունի միակողմանիորեն կասեցնել Հաճախորդի կողմից Հեռակառավարման համակարգից օգտվելու հնարավորությունը, եթե առկա են կասկածներ Հեռակառավարման համակարգի ապօրինի օգտագործման վերաբերյալ: Ընդ որում Հեռակառավարման համակարգի ապօրինի օգտագործամն փաստը Բանկը գնահատում է իր բացառիկ հայեցողությամբ:

8.9 Հաճախորդը պարտավոր է իր հաշվին ապահովել համապատասխան Հեռակառավաման համակարգից օգտվելու համար անհրաժեշտ համակարգչային և հեռահաղորդակցության սարքավորումների, ինտերնետային կապի և այլ միջոցների առկայությունն ու սարքին վիճակը՝ վճարելով դրանց ձեռքբերման, ինչպես նաև Հեռակառավաման համակարգն օգտագործելու հետ կապված տվյալների փոխանցման վճարներն ու այլ ծախսերը:

8.10 Հեռակառավարման համակարգերի միջոցով կատարման չեն ընդունվում Հաճախորդի կողմից Բանկ ուղարկված այն հանձնարարականները, որոնցում առկա են Հաճախորդին տրամադրված համապատասխան ծրագրային ապահովման միջոցների օգտագործման կարգի խախտումներ: Այդ դեպքում Հաճախորդը կրում է իր համար առաջացող անբարենպաստ հետևանքների ռիսկը:

8.11 Բանկային օրվա ավարտից հետո Հեռակառավարման համակարգի միջոցով Հաճախորդի կողմից տրված հանձնարարականը Բանկի կողմից դիտարկվում է որպես հաջորդ բանկային օրը տրված հանձնարարական:

8.12 Հեռակառավարման համակարգերի միջոցով հանձնարարականներ տալու դեպքում Հաճախորդը պարտավոր է ստուգել իր տրված հանձնարարականի և Բանկի կողմից դրա հիման վրա տրված փաստաթղթերի համապատասխանությունը և անհամապատասխանության դեպքում անհապաղ տեղեկացնել Հաշիվը սպասարկող աշխատակցին՝ պատճառները պարզելու նպատակով:

8.13 Հեռակառավարման համակարգի միջոցով տված հանձնարարականը չեղարկելու համար Հաճախորդը պարտավոր է համապատասխան ծառայության մատուցման պայմաններով (ուղեցույց և այլն) սահմանված կարգով և ժամկետներում Բանկ ներկայացնել հանձնարարականի չեղարկման վերաբերյալ դիմում: Համապատասխան կանոններով սահմանված կարգով և ժամկետներում հանձնարարականի չեղարկման վերաբերյալ դիմում չստանալու դեպքում Բանկի կողմից Հեռակառավարման համակարգի միջոցով ներկայացված հանձնարարականի կատարումը կհամարվի պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարում:

8.14 Բանկը ներդնում և կիրառում է տվյալների փոխանցման անվտանգությունն ապահովող ժամանակակից և հուսալի միջոցներ՝ Հեռակառավարման համակարգերի միջոցների անվտանգությունն ապահովելու նպատակով: Այդուհանդերձ, Բանկը պատասխանատվություն չի կրում այդ համակարգերն օգտագործելու հետ կապված Հաճախորդի կորուստների և վնասների համար:

8.15 Բանկը կարող է սահմանել Հեռակառավարման համակարգերի օգտագործման առանձին ժամեր, կասեցնել Հեռակառավարման համակարգերի մատչելիությունը, ինչպես նաև սահմանել և/կամ փոփոխել Հեռակառավարման համակարգեր մուտք գործելու և գործառնություններ իրականացնելու անվտանգությունը բարձրացնող լրացուցիչ պահանջներ և ընթացակարգեր:

8.16 Բանկը կարող է սահմանել հեռակառավարման միջոցներով գործարքների իրականացման գումարային, քանակական և այլ սահմանափակումներ: Բանկն իրավունք ունի կասեցնել կամ մերժել գործարքը՝ մինչև Բանկին բավարարող լրացուցիչ հավաստիացումներ ստանալը:

8.17 Հեռակառավարման համակարգերի միջոցով Հաճախորդի ծառայություններ մատուցելու դեպքում Բանկն իրավունք ունի.

8.17.1 իրականացնել Հեռակառավարման համակարգերում օգտագործվող ծրագրային ապահովման փոխարինումը նորով՝ ապահովելով Հաճախորդի աշխատանքը ծրագրային նոր տարբերակով:

8.17.2 պլանային տեխնիկական աշխատանքներ իրականացնելու ժամանակ առանց հատուցման դադարեցնել Հեռակառավարման համակարգերով Հաճախորդի սպասարկումը:

8.17.3 պահանջել դադարեցնել Հեռակառավարման համակարգերի օգտագործումը կամ արգելել Հաճախորդի մուտքն այդ համակարգ, եթե Հաճախորդի կողմից խախտվել են Բանկի առջև ստանձնած պարտավորությունները կամ հիմքեր կան ենթադրելու, որ Համակարգն օգտագործվում է կամ կարող է օգտագործվել անօրինական ձևով կամ այլ կերպ խախտվում են Հեռակառավարման համակարգերի օգտագործման անվտանգության պահանջները: Ընդ որում փոխանցվող էլեկտրոնային փաստաթղթերի ընդունման և (կամ) կատարման դադարեցման համար Բանկի կողմից նման հատկանիշների և կասկածների առաջացման հիմնավորումներ հաճախորդին չեն տրվում:

8.18 Հեռակառավարման համակարգերի միջոցով Բանկի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու դեպքում Հաճախորդը պարտավոր է.

8.18.1 պահպանել Հեռակառավարման համակարգերից օգտվելու համար Բանկի սահմանած պայմանները (ուղեցույցի պահանջները):

8.18.2 Երրորդ անձանց չտրամադրել բանկի կողմից տրամադրված ծրագրային միջոցները, և դրանք օգտագործել միայն Պայմաններով, Հեռակառավարման համակարգերից օգվելու համար Բանկի կողմից սահմանված ուղեցույցներով, տեխնիկական նկարագրերով ու այլ փաստաթղթերով նախատեսված նպատակների համար, իսկ այդ ծրագրային միջոցները երրորդ անձանց տրամադրելու դեպքում լրիվ ծավալով կրել բանկին և (կամ) երրորդ անձանց պատճառված վնասների կամ հնարավոր վնասների հատուցման պատասխանատվությունը և (կամ) դրանք երրորդ անձանց տրամադրելու հետևանքով իր համար առաջացող անբարենպաստ հետևանքների ռիսկը:

8.19 Բանկի կողմից Հեռակառավարման համակարգերից օգտվելու նպատակով սահմանված կանոններով (ուղեցույցներով) կարող է սահմանվել Հեռակառավարման համակարգերից օգտվելու կապակցությամբ Բանկի և Հաճախորդի միջև առաջացող վեճերի լուծման հատուկ կարգ: Նման կարգ սահմանված չլինելու կամ սահմանված կարգով հաշտության չգալու

դեպքում, Բանկի և Հաճախորդի միջև Հեռակառավարման համակարգերից օգտվելու կապակցությամբ առաջացող վեճերը լուծվում են Պայմաններով սահմանված կարգով:

8.20 Հաճախորդը պատասխանատվություն է կրում Հեռակառավարման համակարգերի միջոցով իր կողմից ներկայացված փաստաթղթերի ճշտության և հավաստիության համար:

8.21 Բանկը պատասխանատվություն չի կրում այն հետևանքների համար, որոնք առաջացել են Հաճախորդի կողմից Հեռակառավարման համակարգերի շահագործման ընթացքում անվտանգության պահանջների չկատարման արդյունքում:

8.22 Հեռակառավարման համակարգերի միջոցով Հաճախորդի սպասարկումը կարող է դադարեցվել կողմերից յուրաքանչյուրի պահանջով:

8.23 Բանկի նախաձեռնությամբ համապատասխան համակարգի միջոցով Հաճախորդին սպասարկելու վերաբերյալ կնքված պայմանագրի լուծման դեպքում Բանկը նախօրոք գրավոր տեղեկացնում է Հաճախորդին այդ մասին, ընդ որում համապատասխան համակարգի միջոցով Հաճախորդին սպասարկելու վերաբերյալ կնքված պայմանագիրը լուծված է համարվում տեղեկացման մեջ նշված ամսաթվից սկսած:

8.24 Հաճախորդի նախաձեռնությամբ Հեռակառավարման համակարգի միջոցով Հաճախորդին սպասարկելու վերաբերյալ կնքված պայմանագրի լուծումը իրականացվում է վերջինիս գրավոր ծանուցման հիման վրա: Անկախ Համակարգի սպասարկման պայմանագրի լուծման ամսաթվից՝ Հաճախորդը պարտավոր է վճարել ամբողջ ամսվա վճարը, անկախ տվյալ ամսվա օգտագործած օրերի քանակից:

8.25 Սույն բաժնով սահմանված կարգով համապատասխան համակարգի միջոցով Հաճախորդին սպասարկելու վերաբերյալ կնքված պայմանագրի լուծումը չի հանգեցնում Բանկի և Հաճախորդի միջև կնքված այլ պայմանագրերի դադարեցմանը:

8.26 Սույն բաժնով սահմանված կարգով համապատասխան համակարգի միջոցով Հաճախորդին սպասարկելու վերաբերյալ կնքված պայմանագրի լուծումը չի հանգեցնում Բանկի և Հաճախորդի միջև մինչև համապատասխան համակարգի միջոցով Հաճախորդին սպասարկելու վերաբերյալ կնքված պայմանագրի լուծումը համապատասխան համակարգով Հաճախորդին սպասարկելու կապակցությամբ Բանկի և Հաճախորդի միջև ծագած պարտավորությունների դադարման, եթե կողմերի գրավոր համաձայնությամբ այլ բան չի սահմանվում:

## 9. ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔ: ՄԻՋՈՑՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

9.1 Բանկը երաշխավորում է Հաճախորդին սպասարկելու կապակցությամբ իրեն հայտնի դարձած և ՀՀ օրենսդրության համաձայն բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների գաղտնիությունը:

9.2 Այն դեպքերում, երբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում, ինչպես նաև այլ անձանց և Բանկի միջև կնքված պայմանագրերի (այլ անձանց կողմից Բանկին ծառայությունների մատուցման, կորպորատիվ միաձուլումների, միացումների, այլ անձանց ակտիվների ձեռքբերման և/կամ օտարման, և այլ գործարքների) ուժով Բանկը ստիպված է տրամադրել բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, Բանկը պարտավոր է դա տրամադրել միայն անհրաժեշտ նվազագույն ծավալով, այդ նպատակով լիազորված անձանց:

9.3 Հաճախորդը սույնով համաձայնություն է տալիս Բանկին՝ Օտարերկրյա պետական լիազոր մարմիններին (այսուհետ՝ Լիազոր մարմին) և/կամ վերջինիս կողմից նշված անձանց, իսկ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով նաև Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններին տրամադրել Հաճախորդի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, այդ թվում բանկային հաշիվների բացման և/կամ փակման վերաբերյալ տեղեկությունները, ցանկացած այլ տեղեկատվություն և փաստաթուղթ:

9.4 Հաճախորդը պարտավոր է օտարերկրյա երկրների օրենսդրությամբ ստանձնած հարկային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու,

պարտավորությունների պատշաճ կատարումը ապահովելու, այդ պարտավորությունների ցանկացած փոփոխությունը բացահայտելու նպատակով, Բանկի առաջին իսկ պահանջով վերջինիս տրամադրել ցանկացած տեղեկատվություն, հաշվետվություն և/կամ փաստաթուղթ՝ Բանկի սահմանած ձևով, և ցանկացած այլ եղանակով համագործակցել Բանկի հետ:

9.5 Բանկն իրավունք ունի Պայմաններով սահմանված հարկային պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Հաճախորդի Հաշիվների նկատմամբ կիրառել սահմանափակում (արգելադրում) և(կամ) արգելափակել հաշվով գործառնությունների կատարումը, այդ կապակցությամբ մերժելով հաշվում առկա միջոցները տնօրինելու և հաշվով գործառնություններ կատարելու՝ հաճախորդի և երրորդ անձանց կողմից ներկայացված բոլոր հանձնարարականները, Լիազոր մարմնի և(կամ) վերջինիս կողմից նշված անձի օրինական պահանջի առկայության դեպքում համապատասխան դրամական միջոցները՝ անակցեպտ կարգով՝ առանց հաճախորդի լրացուցիչ հանձնարարությունների, գանձելով Հաճախորդի Հաշիվներից, փոխանցել Լիազոր մարմնին և(կամ) վերջինիս կողմից նշված անձին, իսկ Պայմաններով ստանձնած պարտավորությունները հաճախորդի կողմից չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու դեպքում նաև միակողմանի լուծել Հաճախորդի հետ կնքված պայմանագիրը (պայմանագրերը):

9.6 Հաճախորդի կողմից սույն Պայմաններով ստանձնած պարտավորություններ չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կարող է հիմք հանդիսանալ վերջինիս կողմից օրենքի ուժով, այդ թվում՝ օտարերկրյա երկրների օրենսդրությամբ, ստանձնած հարկային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու պարտավորություն ստանձնած այլ մարմինների և անձանց կողմից՝ բանկային համակարգի միջոցով կատարվող գործարքների դեպքում, Հաճախորդի դրամական միջոցներից պահումներ կատարելու համար:

9.7 Հաճախորդը երաշխավորում և հավաստիացնում է, որ Հաշվին մուտքագրվող միջոցները կապված չեն փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման կամ այլ հակաիրավական արարքի հետ: Հաճախորդը նաև հավաստիացնում է, որ Հաշիվը չի օգտագործվի որևէ հակաիրավական նպատակով:

9.8 Հաշվով կատարվող գործառնությունների նպատակն ու իրական շահառուներին պարզելու նպատակով Բանկն իրավունք ունի պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, պարզաբանումներ և նյութեր և կարող է կասեցնել գործառնությունները կամ հրաժարվել դրանք կատարելուց (այդ թվում՝ նաև մերժել Հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելը), եթե Բանկի կարծիքով գործարքների իրավաչափությունը հիմնավորող բավարար ապացույցներ չեն ներկայացվում:

## 10. ԲԱՆԿԻ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

10.1 Բանկը և Հաճախորդը պատասխանատվություն են կրում Պայմանագրի խախտման համար ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով սահմանված կարգով: Կողմերը պատասխանատվություն չեն կրում Ընդհանուր/սույն Պայմաններով սահմանված իրենց իրավունքներն իրականացնելու հետևանքով մյուս կողմի կրած կորուստների համար:

10.2 Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդին սպասարկելու ընթացքում Հաճախորդի կորուստների և վնասների համար, եթե դա արդյունք է կապի կազմակերպությունների, վճարահաշվարկային կազմակերպությունների, համակարգի օպերատորների և այլ երրորդ անձանց կողմից տրամադրվող ծառայությունների ընդհատման, դադարեցման, պետական մարմինների ակտերի, անհաղթահարելի ուժի ազդեցության, հաճախորդի գործողությունների (անգործության), ինչպես նաև հաճախորդի կողմից իր իրավունքների չարաշահման: Բանկը նաև պատասխանատվություն չի կրում հաշվով կատարված գործառնությունների համար՝ Հաճախորդի մահվան (լուծարման), անգործունակության, անվճարունակության կամ սնանկության, ինչպես նաև նման այլ դեպքերում, եթե չի ստացել նշված փաստերի վերաբերյալ գրավոր հավաստում և այդ հանգամանքը ազդել է Բանկի վարքագծի վրա: Ընդ որում, Բանկը, հիմք ընդունելով օրենսդրության

պահանջները, համապատասխան փաստերը հիմնավորող փաստաթղթերի բավարար լինելը որոշում է իր բացառիկ հայեցողությամբ:

10.3 Կողմերը համաձայնում են, որ առանց սահմանափակելու սույն Պայմաններով նախատեսված Բանկի այլ իրավունքները սույն Պայմանների շրջանակներում Հաճախորդին սպասարկելիս Բանկը պատասխանատվություն է կրում Հաճախորդներին պատճառած վնասների համար միայն այն դեպքերում, եթե վնասն արդյունք է Բանկի աշխատակիցների դիտավորության կամ կոպիտ անզգուշության:

10.4 Հաճախորդը պատասխանատվություն է կրում Բանկին պատճառված բոլոր վնասների համար (ներառյալ՝ բաց թողնված օգուտը) և սույնով անհետկանչելիորեն հանձնարարում է Բանկին անակցեպտ կարգով այդ գումարները դուրսգրել իր Հաշիվներից և ուղղել այդ պարտավորությունների գումարների մարմանը:

10.5 Կողմերն ազատվում են պարտավորությունների խախտման համար սահմանված պատասխանատվությունից, եթե խախտումը հետևանք է անհաղթահարելի ուժի՝ այսինքն՝ տվյալ պահին անկանխատեսելի և անկանխելի հանգամանքների ազդեցության:

## 11. ԿԻՐԱՌՎՈՂ ԻՐԱՎՈՒՆՔ, ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ

11.1 Սույն Պայմանների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

11.2 Պայմանագրի գործողության ընթացքում Բանկի և Հաճախորդի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, դատական կամ արբիտրաժային կարգով: Ընդ որում՝ կողմերը պարտավորվում են ուշադրությամբ ուսումնասիրել միմյանց պահանջները և համաձայնեցնել փոխշահավետ լուծումներ:Կողմերը գալիս են արբիտրաժային համաձայնության այն մասին, որ սույն պայմանագրի շուրջ ծագած բոլոր վեճերի լուծումը, կողմերից յուրաքանչյուրի պահանջով կարող է հանձնվել Հայաստանի Բանկերի Միության «Ֆինանսական Արբիտրաժ» հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ) քննությանը՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին, Հիմնարկի Պայմանակարգին և Պայմանադրությանը (մատչելի են www.uba.am կայքում) համապատասխան:

11.3 Եթե վեճը ենթակա դատական քննության, Բանկը և Հաճախորդը տալիս են իրենց համաձայնությունը գործով արագացված դատաքննություն կիրառելու համար:

11.4 Ֆիզիկական անձ Հաճախորդներն իրավունք ունեն Պայմաններից բխող պահանջները հանձնել Հայաստանի Հանրապետության Ֆինանսական Համակարգի Հաշտարարի (այսուհետ՝ Հաշտարար) քննությանը՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և պայմաններով:

## 12. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

12.1 Սույն Պայմաններից բխող իրավունքները Բանկը կարող է փոխանցել կամ զիջել այլ անձանց՝ առանց Հաճախորդի նախնական համաձայնության:

12.2 Հաճախորդն իրավունք չունի սույն Պայմաններից բխող իրավունքներն ու պարտականությունները զիջել կամ այլ կերպ փոխանցել այլ անձանց՝ առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության:

12.3 Սույն Պայմաններով սահմանված իրավունքները չիրականացնելը չի կարող մեկնաբանվել որպես այդ իրավունքներից հրաժարում:

12.4 Փոստային հասցեի (գտնվելու վայրի) փոփոխության դեպքում Հաճախորդը պարտավոր է 2 աշխատանքային օրվա ընթացքում նոր փոստային հասցեի մասին իրազեկել Բանկին: Փոփոխությունների մասին Բանկին չիրազեկելու իրավական հետևանքների ռիսկը կրում է Հաճախորդը:

12.5 Բանկը կարող է հրապարակել սույն Պայմանների օտարալեզու թարգմանություններ: Թարգմանությունների և հայերեն լեզվով օրինակների միջև հակասությունների դեպքում գերակայում է հայերեն տարբերակը:

**Բանկի գործունեության պայմանները:** «Արդյունաբերաշինարարականն բանկ» (կրճատ՝ «Արդշինբանկ») փակ բաժնետիրական ընկերությունը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկի 2003թ. փետրվարի 25-ի թիվ 76 Ա որոշմամբ (պետական գրանցման վկայական թիվ 0394, գրանցման համարը՝ 83, ՀՎՀՀ՝ 02566492): Բանկը, համաձայն բանկային գործունեության լիցենզիայի (լիցենզիա թիվ 83), վարում է հաշիվներ, ընդունում ավանդներ, տրամադրում առևտրային և սպառողական վարկեր, ինչպես նաև իրականացնում «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով բանկերին թույլատրված այլ գործառնություններ: Բանկի կենտրոնական գրասենյակի հասցեն է ՀՀ. ք.Երևան, Գր.Լուսավորչի 13, 0015, հեռախոսը՝ (+374) 60 27 04 04 Ֆաքսը՝ (+37410) 56 74 86, Էլ.փոստը՝ office@ardshinbank.am: Բանկի մասնաճյուղերի հասցեները, ինչպես նաև Բանկի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ մանրամասն տեղեկությունները մատչելի են Բանկի պաշտոնական կորպորատիվ կայքում՝ www.ardshinbank.am:

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**
**ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ և ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

(ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԱՄԱՐ)

ՀԱՐԳԵԼԻ Հաճախորդ,

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Խնդրում ենք մինչև ավանդային պայմանագիրը ստորագրելը ծանոթանալ սույն փաստաթղթի դրույթներին: Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ), հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 6, հեռախոս՝ +374 10 583514, ինտերնետային կայքը՝ www.adgf.am: Սույն ծանուցման բոլոր սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) սահմանումներին:

**Հատուցման դեպքը**

Ձեր երաշխավորված ավանդը ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում.

- Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը կամ

- Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետ՝ անվճարունակ բանկ):

**Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը**

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ արտարժութային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

| Ավանդի արժութային կառուցվածքը | Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ | Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ | Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով և արտարժույթով ավանդ | |
|---|---|---|---|---|
| | | | Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից ավել է | Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից պակաս է |
| Ավանդի երաշխավորման առավելագույն չափը | 10 միլիոն ՀՀ դրամ | 5 միլիոն ՀՀ դրամ | 10 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը) | 5 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 5 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով) |

Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր եք, ապա երաշխավորվում է Ձեր առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:

Եթե դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և պարտավորության դրական տարբերության հիման վրա՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:

Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով: Արտարժութային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ՝ Կենտրոնական բանկի հրապարակած արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Ձեր բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 հայկական դրամից:

**Չերաշխավորված բանկային ավանդ**. Ձեր բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝

1. Դուք հանդիսանում եք տվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
2. Դուք հանդիսանում եք տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
3. Դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,
4. Ձեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Դուք հակառակը չեք ապացուցել,
5. Ձեր ավանդը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով,
6. Ձեր ավանդը ներդրված է բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:

**Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները**

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին: Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեսնօրյա ժամկետում Հիմնադրամը անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը: Գործընթացն սկսվում է զանգվածային լրատվական միջոցներում հատուցման վերաբերյալ Հիմնադրամի կողմից լրացուցիչ հայտարարություն հրապարակելու պահից: Դուք կարող եք գրավոր պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող մեկ տարվա ընթացքում: Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի: Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումները՝ գրավոր պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք ամիսների ընթացքում, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Երաշխավորված ավանդի գումարի հատուցումից հետո անվճարունակ բանկի հանդեպ Ձեր ունեցած դրամական պահանջը հատուցված գումարի չափով համարվում է բավարարված: Հատուցման չափը գերազանցող գումարը համարվում է անվճարունակ բանկի պարտավորությունը Ձեր նկատմամբ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր ավանդի հատուցումն առավել սահուն իրականացնելու նպատակով առաջարկում ենք ավանդի ներդրման ժամանակ Ձեր կողմից բանկին տրամադրված տվյալների (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական ապահովության քարտի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և այլն) ցանկացած փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել բանկին:

## ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

**ա.«Տարեկան պարզ (անվանական) տոկոսադրույք»՝ տարեկան կտրվածքով սակագներով սահմանված տոկոսադրույք, որի հիման վրա բանկը հաշվարկում է Ավանդատուին վճարման ենթակա տոկոսագումարները**:

Բանկային հաշվի պարզ (անվանական) տոկոսադրույքի չափ՝ 0.01%:

Բանկային հաշվի պայմանագրով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ՝ (100 000 ՀՀ դրամ) * 0.01% = 10 ՀՀ դրամ՝ 365 օրվա համար:

**բ. Հաշվի տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY)՝ «APY-Էյ-Փի-Ուայ (այսուհետ՝ APY)»՝ այն տոկոսն է, որն անձը կստանա 1000 դրամ ավանդի դիմաց՝ 365-օրյա ժամանակահատվածի ընթացքում տարեկան պարզ տոկոսադրույքի կիրառման և տոկոսների կապիտալացման (compounding) ու վճարման հաճախականության հետևանքով**:

Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY) կազմում է՝ APY – տարեկան տոկոսային եկամտաբերության տոկոսադրույքով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ՝ (100 000 ՀՀ դրամ) * 0.01% = 10 ՀՀ դրամ՝ 365 օրվա համար:

**գ. «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն**՝ Ավանդատուին հաշվեգրված տոկոսները վճարելիս Բանկը հանդես է գալիս որպես ավանդատուի հարկային գործակալ, գանձում է եկամտային հարկի գումարը և այն փոխանցում պետական բյուջե:

**դ.** Ծառայության վերաբերյալ ամբողջական տվյալներին կարող եք ծանոթանալ www.ardshinbank.am կայքում, ինչպես նաև զանգահարելով միասնական տեղեկատվական ծառայություն՝ 060 27 04 04 հեռախոսահամարով:

## ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ



Հարգելի՛ հաճախորդ, տեղեկացնում ենք, որ Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել ինչպես **դատական** կարգով, այնպես էլ **Ֆինանսական համակարգի հաշտարարի** միջոցով:



**Դատարան** դիմելու դեպքում Ձեր և «Արդշինբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) միջև ծագած վեճը լուծում է դատարանը: Դուք կարող եք դիմել դատարան բողոքի քննության ցանկացած փուլում: Դատարանի վճիռը չի կարող վերանայվել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից:

**Ֆինանսական համակարգի հաշտարարին** դիմելու դեպքում Ձեր և Բանկի միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը՝ **«Ֆինանսական համակարգի հաշտարարիմասին» ՀՀ օրենքով** սահմանված կարգով:

Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն **ԱՆՎՃԱՐ** են:

Բողոք ունենալու դեպքում Դուք նախևառաջ պետք է դիմեք Բանկ: Բանկը պարտավորէ 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին: 10 օրից պատասխանը ստանալուց հետո կամ, եթե պատասխան չեք ստացել, առանց դրա, Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Ֆինանսական համակարգի հաշտարարը **չի կարող քննել** Ձեր բողոքը, եթե՝

**1.** Բողոքը Բանկ ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր,

**2.** Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային հատուցում, Ձեր կողմից պահանջվող հատուցումը գերազանցում է 10 միլիոն դրամը (կամ դրան համարժեք արտարժույթով գումարը),

**3.** Բանկի պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի, քան վեց ամիս,

**4.** Ձեր կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել մինչև 2008թ. օգոստոսի 2-ը:



Զգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) վճիռը:

**Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ**
Հաշտարար՝ Փիրուզ Սարգսյան
Հասցե՝ Մ. Խորենացու փ. 15, ՀՀ, Երևան, 0010,
«Էլիտ Պլազա» բկ. 7- րդ հարկ
Հեռ.՝ (374 10) 58 23 21, 58 23 22

Էլ. հասցե՝ info@fsm.am
Ֆաքս՝ (374 10) 58 24 21
կայք՝ www.fsm.am

Հարգելի՛ հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ «Արդշինբանկ» ՓԲԸ-ն հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից այն գործարքների համար, որոնց գումարի չափը չի գերազանցում 500.000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը և միաժամանակ գույքային պահանջի հիմքով ներկայացրած բողոք-դիմումում նշված պահանջի դրամական արտահայտությունը չի գերազանցում 250.000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Դա նշանակում է, որ Բանկը չի կարող դատական կարգով վիճարկել Ֆինանսական
համակարգի հաշտարարի կողմից Բանկի դեմ կայացված որոշումները: հաշտարարի կողմից:

**Դուք** կարող եք նաև բողոքներով դիմել ՀՀ կենտրոնական բանկ: Տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկն իրավասու չէ լուծել Ձեր և Բանկի միջև վեճերը, սակայն կարող է Բանկի նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե պարզվի, որ վերջինս խախտել է օրենքի պահանջները:

**ՀՀ կենտրոնական բանկ**
Հասցե՝ Վ.Սարգսյան 6, ՀՀ, Երևան,
0010,
Հեռ.՝ (374 10) 59 26 97
Էլ. հասցե՝ chairman@cba.am
Ֆաքս՝ (374 10) 56 54 96
կայք՝ www.cba.am

Հարգելի՛ հաճախորդ, հայտնում ենք, որ եթե Ձեր և Բանկի միջև կնքվել է **արբիտրաժային համաձայնություն**, դա նշանակում է, որ Բանկի հետ կնքված պայմանագրից բխող վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային տրիբունալի կողմից: Դուք զրկվում եք Բանկի հետ կնքված պայմանագրից բխող վեճերի կապակցությամբ դատարան դիմելու իրավունքից: Արբիտրաժային տրիբունալի վճիռները, որպես կանոն, դատարանի կողմից վերանայման ենթակա չեն:»